PISA Կարողությունների կարիքների գնահատում

# Հայաստան

Աշակերտների միջազգային գնահատման ծրագիր



OECD
BETTER POLICIES FOR BETTER LIVES

# PISA Կարողությունների կարիքների գնահատում. ՀԱՅԱՍՏԱՆ

Այս զեկույցը հաստատվել է ՏՀԶԿ-ի Կրթության և հմտությունների վարչության ղեկավար Անդրեաս Շլայխերի կողմից:

Այս աշխատանքը հրապարակվել է ՏՀԶԿ-ի գլխավոր քարտուղարի պատասխանատվության ներքո: Այստեղ արտահայտված կարծիքները և կիրառված փաստարկները անպայմանորեն չեն արտացոլում ՏՀԶԿ անդամ-երկրների պաշտոնական տեսակետները:

Այս փաստաթուղթը և նրանում ներառված որևէ քարտեզ որևէ նախապաշարմունքային/կողմնակալ վերաբերմունք չեն արտահայտում որևէ տարածքի կարգավիճակի ու ինքնիշխանության, միջազգային սահմանների սահմանազատումների և որևէ տարածքի կամ քաղաքի անվան վերաբերյալ:

**Լուսանկարներ**՝ © Krakenimages.com/Shutterstock

Այս աշխատանքի օգտագործումը՝ թվային կամ տպագիր, կարգավորվում է հետևյալ հղմամբ ներկայացված դրույթներով ու պայմաններով՝ http://www.oecd.org/termsandconditions:

# *Ծանոթագրություն*

Այս զեկույցը պատրաստվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության օժանդակությամբ՝ «Աշակերտների միջազգային գնահատման ծրագրի» (PISA)՝ «Տվյալների կարողունակությունների կառուցման և կրթության ոլորտում որոշումների կայացման գործընթացում տվյալների կիրառելիության բարձրացման (2021-2022)» համաձայնագրով՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ միասին:

ՏՀԶԿ-ն պայմանագիր է կնքել Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհրդի (ACER) հետ՝ մշակելու համար «Կարողությունների զարգացման և դրանց կիրառման աջակցության» (CBIS) հնարավորությունը PISA-ի մասնակից նոր երկրների համար: Այս զեկույցում ներկայացված Կարողությունների կարիքների գնահատումը (CNA) աջակցության կարևոր կետերից է: Հայաստանի վերաբերյալ CNA զեկույցը պատրաստել են ACER-ի հետազոտողներ դոկտոր Նաոկո Տաբատան (գիտաշխատող և Հայաստանի հետ CBIS-ի փոխգործակցության պատասխանատու) և պրն. Էնդրյու Մանիոնը (գիտաշխատող), ինչպես նաև կարևոր ներդրում ունեն դոկտոր Մայքլ Ուարդը՝ քաղաքականության գլխավոր վերլուծաբան, և տիկ. Սոֆի Վէյսեթսը՝ ՏՀԶԿ-ի Կրթության և հմտությունների զարգացման վարչության վերլուծաբան: Հրապարակումը պատրաստվել է ՏՀԶԿ-ի քարտուղարության կողմից՝ մասնավորապես Նոել Գելլերի և Քելլի Մակովեցկու:

ՏՀԶԿ-ն ու ACER-ն իրենց երախտագիտությունն են հայտնում հետևյալ շահագրգիռ կողմերին, որոնք նպաստել են Հայաստանի և ACER-ի միջև համագործակցային հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև Հայաստանում CNA-ի ներդրմանը. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ Կրթության նախարարություն)՝ տիկին Ժաննա Անդրեասյանին (նախարար), պրն. Արթուր Մարտիրոսյանին (նախարարի տեղակալ միջազգային համագործակցության համակարգման գծով), պրն. Արկադի Պապոյանին (Արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ), տիկին Սուսաննա Ազատյանին (Հանրակրթության և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ), պրն. Ռոբերտ Ստեփանյանին (Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ), տիկին Վարդենի Ամիրխանյանին (Արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ), տիկին Թամարա Ալեքսանյանին (Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ), Գնահատման և թեստավորման կենտրոնից՝ դոկտոր Արսեն Բաղդասարյանին (փոխտնօրեն և PISA ազգային նախագծի ղեկավար), Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնից՝ պրն. Արտաշես Թորոսյանին (տնօրեն), Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից՝ պրն. Արտակ Պողոսյանին (տնօրեն): Անձանց ամբողջական ցանկը, որոնց հետ քննարկվել են CNA-ի հարցերը, հասանելի է Հավելված C-ում:

ՏՀԶԿ-ն ու ACER-ն իրենց երախտագիտությունն են հայտնում նաև ազգային փորձագետներ պրն. Ռոբերտ Ստեփանյանին (Կրթության նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ և PISA-ի Հայաստանի

կառավարման խորհրդի անդամ), դոկտոր Արսեն Բաղդասարյանին (Գնահատման և թեստավորման կենտրոնի փոխտնօրեն և PISA-ի ազգային նախագծի ղեկավար) և տիկին Թամարա Ալեքսանյանին (Կրթության նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ), ովքեր կարևոր ներդրում են ունեցել CNA-ի այս զեկույցի պատրաստման գործում:

# *Բովանդակություն*

**Ծանոթագրություն** ........ **3**

**Հապավումների ցանկ** ........ **6**

**Ծրագրի համառոտ նկարագրություն** ........ **7**

**1. Ներածություն և նախապատմություն** ........ **10**

1.1. PISA-2025 ստուգատեսի Կարողությունների զարգացման և կիրառման աջակցություն ........ 10

**2. Կառուցվածք** ........ **13**

2.1. Հարթություններ ........ 13
2.2. Ցուցանիշներ ........ 14
2.3. Վարկանշային չափանիշներ ........ 14

**3. Մեթոդներ** ........ **15**

**4. Կարողությունների կարիքների գնահատում Հայաստանի համար** ........ **16**

4.1. Հայաստանում CNA-ի աշխատանքները ........ 16
4.2. Հիմնական արդյունքների ամփոփագիր ........ 16

**5. Եզրակացություններ** ........ **24**

**Հավելված Ա. CNA-ի մանրամասն բացահայտումներ** ........ **25**

**Յավելված Բ. Շահագրգիռ կողմերի և փաստաթղթերի քարտեզագրում** ........ **44**

**Annex A. Հավելված Գ. CNA խորհրդատվություններ** ........ **48**

**Հավելված Դ. CNA հարցարաններ** ........ **49**

Հարցաշար պաշտոնյաների համար ........ 49
Հարցաշար անհատների համար ........ 63

## Գծապատկերներ

Գծապատկեր 1: CBIS-ի Ծրագրի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն մասնակիցներին՝ սկսած 2022 թվականից 11

## Աղյուսակներ

Աղյուսակ 1. Հայաստանում Կարողությունների Կարիքների Գնահատման վարկանիշավորում 8

Աղյուսակ Ա. Ա1. Հնարավորություններ ընձեռող միջավայր 26
Աղյուսակ Ա. Ա2. Կազմակերպչական մակարդակ 30
Աղյուսակ Ա. Ա3. Անհատական մակարդակ 38
Աղյուսակ Բ. Բ 1. Շահառուների քարտեզագրման աղյուսակ 44
Աղյուսակ Բ. Բ2. Փաստաթղթերի քարտեզագրման աղյուսակ 46
Աղյուսակ Գ. Գ.1. List of participants in the Capacity Needs Assessment consultations 48

# *Հապավումների ցանկ*

| | |
|---|---|
| ACER | Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհուրդ |
| ANLAS | Ուսուցման գնահատման ազգային համակարգի վերլուծություն |
| ATC | Գնահատման և թեստավորման կենտրոն |
| CBA | Համակարգչային գնահատում |
| CBIS | Կարողությունների զարգացման և դրանց կիրառման աջակցություն |
| CBP | Կարողությունների զարգացման ծրագիր/պլան |
| CNA | Կարողությունների կարիքների գնահատում |
| EMIS | Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգ |
| NC | Ազգային կենտրոն |
| NPM | Ազգային նախագծի ղեկավար |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| PBA | Թղթային եղանակով գնահատում |
| PIP | Նախագծի իրականացման ծրագիր |
| PIRLS | Ընթերցանության Հմտության Առաջընթացի Միջազգային Ուսումնասիրություն |
| PISA | Աշակերտների միջազգային գնահատման ծրագիր |
| PISA-D | PISA Զարգացման ծրագիր |
| SABER | Համակարգային մոտեցում՝ ավելի լավ կրթական արդյունքների համար |
| TIMSS | Թվաբանության և բնագիտության միջազգային միտումների հետազոտություն |

# *Ծրագրի համառոտ նկարագրություն*

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Աշակերտների միջազգային գնահատման ծրագիրը (PISA) ստուգում է իրական կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ 15 տարեկան աշակերտների գիտելիքները ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում:

Հիմք ընդունելով «PISA զարգացման ծրագրի» (PISA-D) և «PISA 2022» աջակցության ծրագրի փորձը, որն անցկացվել է «Երկրի մակարդակով ծրագրի մշակման և իրականացման ապահովման նպատակով գործընկերության» նախագծի շրջանակներում, PISA-2025 ստուգատեսը նոր մասնակիցներին առաջարկում է «Կարողությունների զարգացման և դրանց կիրառման աջակցության» (CBIS) հնարավորություն: CBIS-ը նպատակ ունի նոր մասնակիցներին անհատական և թիրախավորված աջակցություն ցուցաբերել, որպեսզի նրանք հաջողությամբ իրականացնեն PISA-2025 ստուգատեսը: CBIS նախագիծն իրականացվում է ACER-ի կողմից:

CBIS-ի նախնական փուլում իրականացվում է «Կարողությունների կարիքների գնահատում» (CNA)՝ գնահատելու համար CBIS-ի մասնակցի՝ PISA ստուգատեսն իրականացնելու կարողությունը: Գնահատումը հիմնականում նախատեսված է Կրթության նախարարության պաշտոնատար անձանց, CBIS-ի Ազգային նախագծի ղեկավարների (NPM), ինչպես նաև Ազգային կենտրոնի (NC) գլխավոր պաշտոնատար անձանց համար՝ նպատակ ունենալով տեղեկանալու նրանց՝ PISA-ն հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հնարավորությունների ու կարիքների մասին:

PISA-2025 ստուգատեսը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններն ու կարիքները դասակարգվել են ըստ երեք հարթությունների՝

1. Հնարավորություններ ընձեռող միջավայր,
2. Կազմակերպչական մակարդակ,
3. Անհատական մակարդակ:

Յուրաքանչյուր հարթության համար կարողության մի շարք ցուցանիշներ են սահմանվել և գնահատվել՝ ըստ մասնակցի կարողություններն ու կարիքների: Վարկանիշները հետևյալներն են՝

- Չնչին (Լատենտ). կարողությունը քիչ է կամ բացակայում է (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զգալի զարգացում,
- Կազմավորվող. առկա են որոշակի կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զարգացում,
- Կազմավորված. առկա են բավարար կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում) կարողությունների զարգացումը պարտադիր չէ:

Այս զեկույցում ներկայացված են Հայաստանում անցկացված Կարողությունների կարիքների գնահատման (CNA) մանրամասն արդյունքները: Հայաստանի համար CNA-ի արդյունքները համառոտ ներկայացված են Աղյուսակ 1. Հայաստանում Կարողությունների Կարիքների Գնահատման վարկանիշում:

## Աղյուսակ 1. Հայաստանում Կարողությունների Կարիքների Գնահատման վարկանիշավորում

| Ցուցանիշի ընդգրկույթ | Վարկանիշ | | |
|---|---|---|---|
| | Կազմավորված | Կազմավորվող | Չնչին/Լատենտ |
| **Հնարավորություններ ընձեռող Միջավայրի հարթություն** | | | |
| E1 Գնահատման համակարգի կառուցվածք | ✓ | | |
| E2 Օրենսդրություն կամ քաղաքականություն | ✓ | | |
| E3 Ղեկավարություն | ✓ | | |
| E4 Ինստիտուցիոնալ կարգավորումներ | ✓ | | |
| E5a Ֆինանսավորում | ✓ | | |
| E5b Նվիրատուների կողմից ֆինանսավորում | | ✓ | |
| E6 Գնահատման տվյալների օգտագործում | ✓ | | |
| E7 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ | ✓ | | |
| **Կազմակերպչական մակարդակի հարթություն** | | | |
| O1 Գնահատման անձնակազմ | | ✓ | |
| O2 Ֆինանսավորման մոբիլիզացում | ✓ | | |
| O3 Ժամանակավոր աշխատակազմ | ✓ | | |
| O4 Ֆիզիկական ենթակառուցվածք | ✓ | | |
| O5 SS ենթակառուցվածք և աջակցություն | ✓ (PBA-ի համար) | | |
| | | ✓ (CBA-ի համար) | |
| O6 Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր | ✓ | | |
| O7 Գործիքների մշակում | ✓ | | |
| O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն | | ✓ | |
| O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանք | | ✓ | |
| O10 Ուսումնասիրություններ  և լոգիստիկա | ✓ (PBA-ի համար) | | |
| | | ✓ (CBA-ի համար) | |
| O11 Տվյալների կառավարում | ✓ | | |
| O12 Տվյալների վերլուծություն և զեկույցների կազմում | | ✓ | |
| O13 Տարածում և հաղորդակցություն | | ✓ | |
| **Անհատական մակարդակի հարթություն** | | | |
| I1 Ազգային նախագծի ղեկավար | ✓ | | |
| I2 Գնահատման գործիքների համակարգող | | ✓ | |
| I3 Ընտրանքի ղեկավար | | ✓ | |
| I4 Ուսումնասիրությունների  և լոգիստիկայի ղեկավար | ✓ (PBA-ի համար) | | |
| | | ✓ (CBA-ի համար) | |
| I5 Տվյալների ղեկավար | ✓ | | |
| I6 Տվյալների վերլուծաբան | | ✓ | |
| I7 Տեղեկատվական տեխնոլոգիայի համակարգող | ✓ (PBA-ի համար) | | |
| | | ✓ (CBA-ի համար) | |
| I8 Անգլերեն հաղորդակցություն | ✓ | | |

Նշում՝ PBA = Թղթային եղանակով գնահատում, CBA = Համակարգչային եղանակով գնահատում:

Ամփոփելով, Հայաստանում CNA-ն ցույց է տալիս, որ PISA-2025 ստուգատեսն իրականացնելու կարողությունը հիմնականում կազմավորված է հնարավորություններ ընձեռող միջավայրում, բացառությամբ նվիրատուների ֆինանսավորման, որը գնահատվում է որպես կազմավորվող, ինչը նշանակում է, որ լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններ կարող են ստեղծվել, եթե կարիքները բացահայտվեն:

Թեև Հայաստանը միջազգային և ազգային մակարդակով մեծածավալ գնահատումներ կատարելու երկարատև փորձ ունի, PISA-ի մեթոդներն ու ընթացակարգերը տարբեր են և ավելի բարդ՝ համեմատած Հայաստանի նախկին փորձառության: Հետևաբար, կազմակերպչական և անհատական աշխատանքների որոշ բնագավառներ կարող են խնդրահարույց լինել: PISA-2025 ստուգատեսին համակարգչային գնահատման եղանակի (CBA) կիրառմամբ մասնակցելու Հայաստանի մտադրությունը հավելյալ խնդիրներ կարող է առաջ բերել: Քանի որ CBA անցկացնելու համար հարկավոր կարողությունները զգալիորեն տարբեր են թղթային եղանակով գնահատման (PBA) համար հարկավոր կարողություններից, կազմակերպչական և անհատական մակարդակներում CBA-ի և PBA-ի համար տարբեր վարկանիշներ են հատկացվել ՏՏ-ի, հետազոտական գործողությունների և լոգիստիկայի ոլորտներին վերաբերող ցուցանիշներին:

Անհատական մակարդակում Ազգային կենտրոնի (NC) գլխավոր դերերից երեքը (Ընտրանքի ղեկավարը, Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավարը և Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգողը) կա՛մ դեռ չէին նշանակվել, կա՛մ էլ նշանակված անձի մասին տեղեկատվությունը բացակայում էր CNA-ը կազմելու ժամանակ: Հետևաբար, այս պաշտոնների վարկանիշները ենթադրաբար են լրացվել՝ հիմք ընդունելով կազմակերպչական մակարդակի փորձը:

Ընդհանուր առմամբ, խորհուրդ է տրվում, որ Հայաստանում PISA-ի Ազգային կենտրոնը (NC) առավելագույնս օգտվի համապատասխան կարողությունների զարգացման հնարավորություններից, որոնք կառաջարկվեն PISA-2025-ի ընթացքում: Այս հնարավորությունները կներկայացվեն Հայաստանի կարողությունների զարգացման ծրագրում՝ որպես հաջորդ քայլ:

# 1. Ներածություն և նախապատմություն

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Աշակերտների միջազգային գնահատման ծրագիրը» (PISA) աշխարհում գիտելիքների գնահատման միջազգային ամենախոշոր ծրագիրն է: PISA-ն ստուգում է 15 տարեկան աշակերտների՝ իրական կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիքները ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում: PISA-ն ներկայացնում է ուսումնառության արդյունքների միջազգային չափանիշ՝ բենչմարք, որը հնարավորություն է տալիս կրթության ոլորտում փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնել :

PISA-2025-ը PISA-ի 9-րդ շրջափուլն է, որն անցկացվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ 2000 թվականից սկսած:[1] PISA-2025 ստուգատեսի ուշադրության կենտրոնում գիտությունն է, գնահատումը ներառում է նաև «Ուսուցումը թվային աշխարհում» նորարարական ոլորտը: Նորարարական բաղադրիչը նպատակ ունի ստուգել աշակերտների՝ ուսումնառության ընթացքում թվային գործիքներից ինքնուրույն օգտվելու հմտությունները:[2] Պայմանագրի կողմերի ընդհանուր կառավարումը, PISA-2025 ստուգատեսի անցկացումը, ինչպես նաև նորարարական ոլորտի համար գործիքների մշակումը իրականացվում է Ավստրալիայի կրթական հետազոտությունների խորհրդի (ACER) կողմից: Պայմանագրի կողմերից են նաև Oxford University Press-ը՝ գիտության շրջանակի և Westat-ը՝ ընտրանքի որոշման աշխատանքների մասով:

## 1.1. PISA-2025 ստուգատեսի Կարողությունների զարգացման և կիրառման աջակցություն

Ճշգրիտ տվյալներ ապահովող լայնածավալ գնահատման անցկացումը, այնուհետև այդ տվյալների օգտագործումը փաստերի վրա հիմնված որոշում կայացնելու համար, դժվարին աշխատանք է ցանկացած կրթական համակարգի համար: Թեև PISA-ն մասնակիցներին առաջարկում է կարողությունների զարգացման մի շարք հնարավորություններ, դրանցից օգտվելը կարող է դժվար լինել նոր մասնակիցների համար: Հետևաբար, կարողությունների զարգացումը ցանկացած PISA ստուգատեսի անբաժանելի մասն է կազմում:

Հիմք ընդունելով «PISA զարգացման ծրագրի» (PISA-D)[3] և «PISA 2022 Core E» աջակցության ծրագրերի փորձը՝ PISA-2025 ստուգատեսը նոր մասնակիցներին առաջարկում է «Կարողությունների զարգացման և կիրառման աջակցության» (CBIS) հնարավորություն: CBIS-ը նպատակ ունի նոր մասնակիցներին անհատական և թիրախավորված աջակցություն ցուցաբերել, որպեսզի նրանք հաջողությամբ իրականացնեն PISA-2025 ստուգատեսը: CBIS նախագիծն իրականացվում է ACER-ի կողմից:

CBIS նախագիծը բաղկացած է հետևյալ հինգ մասերից՝

- Ծրագրի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն,

---

[1] Բացառությամբ PISA-2022 ստուգատեսի, որն անցկացվեց PISA-2018 ստուգատեսից չորս տարի անց՝ COVID-19 համավարակի պատճառով:

[2] www.oecd.org/pisa/innovation/learning-digital-world/

[3] www.oecd.org/pisa/pisa-for-development/

- CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի միջոցով իրականացվող աջակցություն,
- Տվյալ երկիր այցելություն,
- Փորձի փոխանակում,
- Ծրագրի իրականացման աջակցություն:

Ծրագրի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցությունը ներառում է ռեսուրսների, գործիքների և գործողությունների համախումբ՝ ուղղված PISA-2025 ստուգատեսի պլանավորման ու նախապատրաստական աշխատանքներում մասնակիցների աջակցությանը: Այս փուլի հիմնական բաղադրիչներն են՝ «Կարողությունների կարիքների գնահատումը», «Կարողությունների զարգացման ծրագիրը», «Նախագծի իրականացման ծրագիրը» (տե՛ս Գծապատկեր 1):

**Գծապատկեր 1: CBIS-ի Ծրագրի պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն մասնակիցներին՝ սկսած 2022 թվականից**




### *1.1.1. Կարողությունների կարիքների գնահատում (CNA)*

CBIS-ի նախնական փուլում անցկացվում է CNA՝ գնահատելու համար CBIS-ի մասնակիցների՝ PISA ստուգատեսն իրականացնելու կարողությունը: Գնահատումը հիմնականում նախատեսված է CBIS-ի Ազգային նախագծի ղեկավարների (NPMs) և Ազգային կենտրոնի (NC) առանցքային դերակատարների համար՝ նպատակ ունենալով տեղեկանալու նրանց՝ PISA-ն հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ կարողությունների ու կարիքների մասին: CNA-ի արդյունքները ներկայացված են համառոտ զեկույցի մեջ, որում շեշտադրված են կարողությունների զարգացման անհրաժեշտություն ունեցող ոլորտները, ինչն իր հերթին կօգնի NC-ին՝ պատշաճ կերպով բաշխել ռեսուրսները և կենտրոնանալ կարողությունների զարգացման վրա, որտեղ որ դա անհրաժեշտ է:

### *1.1.2. Կարողությունների զարգացման ծրագիր (CBP)*

Կարողությունների զարգացման ծրագիրը (CBP) նախատեսված է CBIS-ի մասնակիցների համար և նպատակ ունի օգնել նրանց զարգացնելու PISA ստուգատեսն անցկացնելու իրենց կարողությունները: CBP-ում ներկայացված են կարողությունների զարգացման այն բոլոր հնարավորությունները, որոնք առաջարկվելու են PISA-ի մասնակիցներին PISA-2025 ստուգատեսի ժամանակ, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք նախատեսված են հատուկ CBIS-ի մասնակիցների համար՝ համաձայն CNA-ում բացահայտված կարիքների: CBP-ում ներառված են PISA-ի հանդիպումների, վերապատրաստման դասընթացների և CBIS-ի հետ կապված աշխատանքների մասին մանրամասներ:

### *1.1.3. Նախագծի իրականացման ծրագիր (PIP)*

PIP-ը ռեսուրսների և գործիքների ամբողջություն է, որի նպատակն է օգնել CBIS-ի մասնակիցներին PISA-2025 ստուգատեսի նախապատրաստական և իրականացման աշխատանքներում: PIP-ի ժամանակացույցը, որը PIP-ի գլխավոր առանձնահատկությունն է, գործիք է, որտեղ գրանցված են PISA-ի այն բոլոր առաջադրանքները, որոնք PISA NC-ները պետք է կատարեն՝ ըստ նշված ժամանակացույցի: CBIS-ի մասնակիցներին աջակցություն է տրամադրվում, որպեսզի PIP-ի ժամանակացույցը հարմարեցնեն իրենց երկրի պահանջներին և միջավայրին: PIP-ի հարմարեցված ժամանակացույցը շարունակաբար թարմացվում է PISA-2025 ստուգատեսի իրականացման ողջ ընթացքում և օգտագործվում է որպես համապարփակ պլանավորման և մոնիթորինգի գործիք:

Այս զեկույցում ներկայացված է Կարողությունների կարիքների գնահատումը (CNA) Հայաստանի համար: Զեկույցում ներկայացված են CNA-ի կառուցվածքը, մեթոդաբանությունը և արդյունքները:

## 2. Կառուցվածք

PISA-2025 ստուգատեսի CNA-ի նպատակն է բացահայտել CBIS-ի մասնակիցների կարողություններն ու կարիքները՝ PISA-2025 ստուգատեսը հաջողությամբ իրականացնելու համար: PISA-2025 ստուգատեսի CBIS CNA-ի կառուցվածքը մշակվել է «PISA-D» նախագծի Կարողությունների կարիքների վերլուծության[4] և «PISA-2022 Core E» նախագծի Կարողությունների կարիքների վերլուծության կառուցվածքի (չհրապարակված) հիման վրա: Բացի այդ, հաշվի են առնվել PISA-ին առնչվող հատուկ նյութեր՝ PISA-2025 ստուգատեսի հաջող իրականացման համար անհրաժեշտ կարողությունները բացահայտելու նպատակով: Դրանց թվում են՝ PISA-2025 ստուգատեսի Տեխնիկական ստանդարտները, PISA-2025 ստուգատեսի NPM ուղեցույցը և PISA-2025 ստուգատեսի NPM և NC անձնակազմի պաշտոնների և պատասխանատվությունների վերաբերյալ փաստաթուղթը[5]:

PISA-2025 ստուգատեսի նախապատրաստական և իրականացման աշխատանքների հետ կապված կարողությունները սահմանվում են հետևյալ կերպ.

> *Նախագծի համար պատասխանատու անձերի և ինստիտուտների կարողությունը՝ տվյալ երկրում իրականացնելու տարբեր առաջադրանքներ՝ կապված PISA-ի իրականացման բազմաթիվ քայլերի և երկրի կողմից ընտրված տարբերակների հետ (օրինակ՝ համակարգչային կամ թղթային եղանակով գնահատում), լուծելու խնդիրները, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման ընթացքում, հետևելու ծրագրի ժամանակացույցին, սահմանելու ծրագրի նպատակները և անշեղորեն հասնելու դրանց, ինչպես նաև ներկայացնելու ազգային վերլուծություն և զեկուցում:*

Այս սահմանումը գործարկվում է երեք կառուցվածքային հարթություններով և դրանց կարողությունների ցուցանիշներով:

### 2.1. Հարթություններ

PISA-2025 ստուգատեսը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններն ու կարիքները դասակարգվել են ըստ երեք հարթությունների՝

1. Հնարավորություններ ընձեռող միջավայր. ուշադրություն է դարձվում համակարգային մակարդակով երկրում անցկացվող լայնածավալ գնահատումների միջավայրին: Այս հարթությունը վերաբերում է գնահատման համակարգի ավելի ընդհանուր կողմերին, ինչպիսիք են քաղաքականությունը և կանոնակարգերը, ինստիտուցիոնալ պայմանավորվածությունները և ֆինանսավորումը:
2. Կազմակերպչական մակարդակ. ուշադրություն է դարձվում ազգային մակարդակով լայնածավալ գնահատումներ իրականացնելու կարողություններին և կարիքներին: Լուսաբանվում են լայնածավալ գնահատումներից ստացված տվյալների կառավարման, մշակման, կիրառման և վերլուծության կազմակերպչական կողմերը՝ կենտրոնանալով PISA-ի իրականացման վրա:

[4] PISA-D նախագծի Կարողությունների կարիքների վերլուծության զեկույցները պատրաստվել են մասնակից ութ երկրների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ www.oecd.org/pisa/pisa-for-development/pisa-for-development-documentation.htm

[5] Բոլոր փաստաթղթերը պատրաստ են:

3. Անհատական մակարդակ. ուշադրություն է դարձվում առանցքային դերակատարներին և պարտականություններին, ինչպես նաև անձի գիտելիքներին, հմտություններին և փորձառությանը, որոնք անհրաժեշտ են՝ PISA-ի հետ կապված տարբեր առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար: Այս երեք հարթությունների միջոցով CNA-ը ընդգրկում է կարողություններն ու կարիքները, որոնք անհրաժեշտ են՝ PISA-ն հաջողությամբ իրականացնելու համար՝ ներկա և ապագա ցանկալի կարողությունների ավելի լայն համատեքստում և կայուն գնահատման համակարգի դեպքում:

## 2.2. Ցուցանիշներ

Յուրաքանչյուր հարթության համար կարողությունների բազմաթիվ ցուցանիշներ են սահմանված: Ընդգրկված են հետևյալ կետերը՝

- **Հնարավորություններ ընձեռող միջավայր՝** E1 Գնահատման համակարգի կառուցվածք, E2 Օրենսդրություն կամ քաղաքականություն, E3 Ղեկավարություն, E4 Ինստիտուցիոնալ կարգավորումներ, E5a Ֆինանսավորում, E5b Նվիրատուների կողմից ֆինանսավորում, E6 Գնահատման տվյալների օգտագործում, E7 Կրթության կառավարման տեղեկատվության համակարգ
- **Կազմակերպչական մակարդակ՝** O1 Գնահատման անձնակազմ, O2 Ֆինանսավորման մոբիլիզացում, O3 Ժամանակավոր աշխատակազմ, O4 Ֆիզիկական ենթակառուցվածք, O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն, O6 Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր, O7 Գործիքների մշակում, O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն, O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանք, O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա, O11 Տվյալների կառավարում, O12 Տվյալների վերլուծություն և զեկույցների կազմում, O13 Տարածում և հաղորդակցություն
- **Անհատական մակարդակ՝** I1 Ազգային նախագծի ղեկավար, I2 Գնահատման գործիքների համակարգող, I3 Ընտրանքի ղեկավար, I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար, I5 Տվյալների ղեկավար, I6 Տվյալների վերլուծաբան, I7 Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, I8 Անգլերեն հաղորդակցություն:

Կարողությունների ցուցանիշների ամբողջական նկարագրությունը ներկայացված է Հավելված Ա-ում:

## 2.3. Վարկանշային չափանիշներ

Վարկանշային չափանիշներ են սահմանվել յուրաքանչյուր ցուցանիշի ընդգրկույթի համար՝ գնահատման գործընթացին աջակցելու և կարողություններն ու կարիքները բացահայտելու նպատակով: Առանձնանում են երեք չափանիշներ՝

- **Չնչին(Լատենտ)՝** Կարողությունը քիչ է կամ բացակայում է (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զգալի զարգացում:
- **Կազմավորվող՝** Առկա են որոշակի կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում), պահանջվում է կարողությունների զարգացում:
- **Կազմավորված՝** Առկա են բավարար կարողություններ (ցուցանիշի ընդգրկույթում), կարողությունների զարգացումը պարտադիր չէ:

## 3. Մեթոդներ

CBIS-ի մասնակիցների համար CNA-ը հիմնականում որակական բնույթ է կրում: Կարողությունների և կարիքների մասին տեղեկատվություն ստանալու համար օգտագործվում են տվյալների հավաքման երեք հիմնական մեթոդ.

- **Առցանց հարցումներ**. յուրաքանչյուր հարթությանը վերաբերող կարողությունների ցուցանիշները գործածվում են CBIS-ի CNA-ի հարցումներում, որոնք ուղղված են լինում պաշտոնյաներին և անհատներին (Հավելված Դ): Մեկը նախատեսված է բացահայտելու կարողություններն ու կարիքները համակարգային և կազմակերպչական մակարդակներում, մյուսը՝ անհատական մակարդակում: Հարցարանների մասնակիցները որոշվում են NPM-ի կողմից, որը Հայաստանի դեպքում Կրթության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կրթական կամ գնահատման ինստիտուտների, կազմակերպությունների, գործակալությունների, զարգացման գծով գործընկերների և նվիրատուների պաշտոնատար ներկայացուցիչները, PISA Ազգային կենտրոնի ղեկավարը, PISA NPM-ը և Ազգային կենտրոնի հիմնական աշխատակիցներ: Առանցքային շահառուներին որոշելու համար կատարվում է վերջիններիս քարտեզագրում:
- **Խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ**. շահառուների հետ խորհրդակցություններ են անցկացվել CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի կողմից երկիր կատարած մեկշաբաթյա այցի ընթացքում՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու համար, որոնք հնարավոր չէ ստանալ առցանց հարցումների միջոցով: NPM-ն աջակցում է խորհրդակցությունների անցկացմանը՝ դրանք համակարգելով ու ժամանակացույց կազմելով, իսկ անհրաժեշտության դեպքում թարգմանիչ ներգրավվելով:
- **Փաստաթղթերի վերլուծություն՝** Վերլուծության են ենթարկվում նաև համապատասխան փաստաթղթերը, որտեղ ներկայացված են լայնածավալ գնահատումներով բացահայտված հնարավորությունները (օրինակ՝ քաղաքականության, ռազմավարության վերաբերյալ փաստաթղթերը): NPM-ից պահանջվում է բացահայտել և ձեռք բերել համապատասխան փաստաթղթերը, որոնք հասանելի են անգլերենով կամ թարգմանել համապատասխան փաստաթղթերը անգլերենի՝ հիմք ընդունելով փաստաթղթերի քարտեզագրումը:

CBIS-ի մասնակցի կարողություններն ու կարիքները վերլուծելու համար, CBIS-ի CNA-ի հարցարաններից, շահագրգիռ կողմերի խորհրդակցություններից և փաստաթղթերից ստացված տվյալները ամփոփվում և գնահատվում են ըստ նրանց՝ յուրաքանչյուր հարթությանը և կարողության ցուցանիշին առնչության: Այնուհետև, կարողության յուրաքանչյուր ցուցանիշի տրվում է՝

- վարկանիշ՝ ըստ սահմանված վարկանշային չափանիշների,
- բացատրություն՝ նշանակված վարկանիշի համար,
- բացահայտված կարողությունների ու կարիքների նկարագրություն:

Այս զեկույցը պատրաստվել է CBIS-ի յուրաքանչյուր մասնակցի գնահատման արդյունքները ներկայացնելու համար: Ներկայացված արդյունքների ճշգրտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի համաձայնությունը և ներգրավվածությունն ապահովելու համար CBIS-ի մասնակիցներին առաջարկվել է զեկույցը ներկայացնել շահառուների ուսումնասիրմանը:

## 4. Կարողությունների կարիքների գնահատում Հայաստանի համար

Այս գլխում ներկայացված են Հայաստանում Կարողությունների կարիքների գնահատման (CNA) հետ կապված աշխատանքները, հիմնական արդյունքների և եզրակացությունների ամփոփագիրը:

### 4.1. Հայաստանում CNA-ի աշխատանքները

CNA շահագրգիռ կողմերի և փաստաղթերի քարտեզագրման աղյուսակները կազմվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Կրթության նախարարություն) և Գնահատման և թեստավորման կենտրոնի (ATC) կողմից՝ 2022 թվականի հունիս և հուլիս ամիսներին տեղի ունեցած չորս առցանց հանդիպումների ընթացքում: ATC-ն Հայաստանում քննություններ և լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոն է: Քարտեզագրումը օգտակար եղավ հետագա CNA-ի աշխատանքների համար: Շահագրգիռ կողմերի և քարտեզագրման աղյուսակները ներկայացված են Հավելված Բ-ում:

Այնուհետև CBIS-ի CNA-ի հարցաթերթիկները հանձնվեցին հիմնական շահագրգիռ կողմերին, որոնք նշանակվել էին Կրթության նախարարության և ATC-ի ներկայացուցիչների կողմից: 2022-ի հուլիսին՝ մոտավորապես երեք շաբաթվա ընթացքում, պաշտոնյաների համար նախատեսված հարցաշարի պատասխանողներից ստացվել են 6, իսկ անհատների համար նախատեսված հարցաշարից՝ 22 վավեր պատասխաններ:

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ են անցկացվել ACER-ի Էնդրյու Մանիոնի կողմից 2022 թվականի հուլիսի 11-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստան կատարած նրա այցի ընթացքում՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, որոնք հնարավոր չէր հավաքել CBIS-ի CNA-ի հարցաթերթիկների միջոցով: Խորհրդակցությունները տեղի են ունեցել մայրաքաղաք Երևանում՝ Կրթության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների և կրթական հաստատությունների, այդ թվում՝ ATC-ի ներկայացուցիչների հետ: Խորհրդակցություններ են անցկացվել նաև զարգացման հարցերով հիմնական գործընկերների ներկայացուցիչների հետ: Հավելված Գ-ում ներկայացված է շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների մասնակիցների ամբողջական ցանկը:

Վերոնշյալ գործողությունների արդյունքում հավաքված ամբողջ տեղեկատվությունը համեմատվել և վերլուծվել է փաստաթղթերի քարտեզագրման ժամանակ:

### 4.2. Հիմնական արդյունքների ամփոփագիր

Յուրաքանչյուր ցուցանիշի ընդգրկույթի համար տրվել է վարկանիշ՝ համառոտ հիմնավորման և կարողությունների բացահայտված կարիքների հետ միասին: Գնահատման մանրամասները ներկայացված են Հավելված Ա-ում:

#### *4.2.1. Հնարավորություններ ընձեռող միջավայր*

*Գնահատման համակարգի կառուցվածք (E1) - Կազմավորված*

Ազգային ուսումնասիրությունները (Ազգային լայնածավալ գնահատման ծրագիր) և Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտությունը (TIMSS, միջազգային լայնածավալ գնահատման ծրագիր) ապահովում են

Հայաստանում գնահատման համակարգի մի մասը միայն, որը կատարողականի տվյալներ է ներկայացնում Հայոց պատմություն, Գրականություն, Բնագիտություն, Մաթեմատիկա և Օտար լեզու առարկաներից 4-րդ դասարանում (հանրակրթական դպրոցի տարրական փուլի վերջին տարի) և 8-րդ դասարանում (միջնակարգ կրթության առաջին փուլի նախավերջին տարի): Գնահատման լայնածավալ ծրագրերն ապահովում են նաև համապատասխան համատեքստին բնորոշ տվյալներ:

*Օրենսդրություն կամ քաղաքականություն (E2) – Կազմավորված*

2011 թվականի հունիսի 23-ի ««Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի մասնակցությունը գնահատման միջազգային լայնածավալ ծրագրերին, մասնավորապես՝ TIMSS-ին, PIRLS-ին և PISA-ին: Դրանից հետո մշակվել է քաղաքականության ռազմավարական նոր փաստաթուղթ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել ««ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծին (այսուհետ՝ Ծրագիր) 2022 թվականի հունիսի 28-ին: ՀՀ Ազգային ժողովը 2022 թվականի նոյեմբերի 16-ին հաստատել է Ծրագիրը:

*Ղեկավարություն (E3) – Կազմավորված*

Կրթության նախարարությունը և ATC-ն նպաստում են ազգային և միջազգային լայնածավալ գնահատումների իրականացմանը: Այն արտացոլվում է յուրաքանչյուր հաստատության կայքում տեղադրված հոդվածներում, մամուլում, հանդիպումներում, սեմինարներում, դասընթացներում և հեռուստատեսային տեսանյութերում: Հայաստանի մասնակցությունը միջազգային լայնածավալ գնահատումներին լայնորեն քննարկվում և համակարգվում է Կրթության նախարարությունում, ինչը վկայում է լայնածավալ գնահատմանն աջակցող հետևողական ղեկավարության մասին: Բացի այդ, թե՛ Կրթության նախարարության, և թե՛ ATC-ի ներկայացուցիչների կանոնավոր մասնակցությունը PISA CBIS-ի առցանց հանդիպումներին վկայում է Հայաստանում PISA-ի իրականացումը խրախուսող բարձր ղեկավարության մասին:

*Կազմակերպչական մեխանիզմներ (E4) - Կազմավորված*

ATC-ն Հայաստանում լայնորեն ճանաչված է որպես աշակերտների գնահատման առաջատար մարմին: Նրա պարտականությունների մեջ մտնում են ոչ միայն միջազգային, այլև ազգային լայնածավալ գնահատումները և քննությունները: ATC-ն հաշվետու է Կրթության նախարարին:

*Ֆինանսավորում (E5a) – Կազմավորված*

Հայաստանը կանոնավոր կերպով մասնակցել է TIMSS-ին (2003, 2007, 2011, 2015, 2019, և կմասնակցի 2023-ին), և արդեն ապահովել է PISA-2025 ստուգատեսին մասնակցելու ֆինանսավորումը: Բացի այդ, Կրթության նախարարությունը 2010 թվականից սկսած ամեն տարի իրականացնում է Ազգային ուսումնասիրություններ: Սրանք վկայում են կառավարության կողմից միջազգային և ազգային լայնածավալ գնահատումների համար կայուն ֆինանսավորման տրամադրման մասին:

*Նվիրատուների կողմից ֆինանսավորում (E5b) – Կազմավորվող*

Հայաստանի լայնածավալ գնահատման ծրագրերը ներկայումս ֆինանսավորվում են Կառավարության կողմից, սակայն լայնածավալ գնահատման հետ կապված կարողությունների զարգացման որոշ միջոցառումներ ստանում են արտաքին ֆինանսավորում: Բացի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների աջակցությունից, նվիրատուների կողմից ֆինանսավորման հատուկ կարիքներ կարծես թե չեն հայտնաբերվել: Այնուամենայնիվ, Կրթության նախարարության շարունակական ջանքերը՝ ներգրավելու զարգացման հարցերով զբաղվող գործընկերների, կարող են հետագայում հաջողությամբ պսակվել նվիրատուների կողմից ֆինանսավորում ստանալու հարցում՝ ուղղված լայնածավալ գնահատումների աջակցությանը, եթե լրացուցիչ կարիքներ ի հայտ գան:

*Գնահատման տվյալների օգտագործում (E6) – Կազմավորված*

CNA-ի միջոցով հավաքված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում մեծածավալ գնահատումների տվյալները օգտագործվել են փաստերի վրա հիմնված կրթական քաղաքականության մշակման և պլանավորման համար, այդ թվում՝

- Կրթության ոլորտի պլանավորում,
- Մոնիթորինգ և գնահատում,
- Ռեսուրսների/ֆինանսավորման բաշխում,
- Ուսումնական ծրագրի մշակում,
- Դպրոցի զարգացում,
- Դպրոցի կրթական աշխատակազմի զարգացում (օրինակ՝ ուսուցիչների վերապատրաստողների, ուսուցիչների, դպրոցների տնօրենների որակավորում և մասնագիտական զարգացում),
- Ուսուցիչների մասնագիտական զարգացում:

*Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (E7) - Կազմավորված*

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (EMIS) Հայաստանում կառավարվում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (NCET) կողմից: PISA-ի CBIS-ի շրջանակներում երկիր կատարած այցի ժամանակ NCET-ին կատարած այցը ցույց տվեց, որ Հայաստանը մշակել է դպրոցին, ուսուցիչներին և աշակերտներին վերաբերող տվյալների և տեղեկատվության հավաքման, ինտեգրման, մշակման, պահպանման և օգտագործման համապարփակ համակարգ:

### *4.2.2. Կազմակերպչական մակարդակ*

*Գնահատող թիմ (O1) - Կազմավորվող*

Թեև PISA Ազգային կենտրոնի ստեղծումը ընթացքի մեջ էր CNA-ի անցկացման ժամանակ, ATC-ում արդեն գոյություն ունեն կազմակերպչական կարողություններ՝ նվիրված և հմուտ գնահատող թիմ ձևավորելու համար: ATC-ի փոխտնօրենը, ով ունի TIMSS-ի անցկացման բավականաչափ փորձ, նշանակվել է PISA ստուգատեսի Ազգային նախագծի ղեկավար: ATC-ն օգտագործել է TIMSS-ի փորձը՝ 2010 թվականից ի վեր ամեն տարի մշակելու և իրականացնելու համար ազգային լայնածավալ գնահատումներ, այդ թվում՝ կառավարում, գործիքների մշակում, թեստերի կազմում, հետազոտական գործողություններ, տվյալների կառավարում և վերլուծություն, ինչպես նաև զեկույցների կազմում և տարածում: Թեև ATC-ն ունի

այս արժեքավոր փորձը, որոշ ոլորտներ, օրինակ՝ ընտրանքի որոշում, լեզվական որակի վերահսկում, զեկույցների կազմում և տարածում, կարող են դժվարություններ առաջացնել, քանի որ PISA-ի որոշ մեթոդներ և ընթացակարգեր տարբեր են և ավելի բարդ՝ համեմատած այլ միջազգային լայնածավալ գնահատումների հետ: Բացի այդ, CBA-ին առաջին անգամ մասնակցելը կարող է դժվարություններ առաջացնել:

*Ֆինանսավորման մոբիլիզացում (O2) – Կազմավորված*

ATC-ի կողմից TIMSS-ի և Ազգային ուսումնասիրությունների կանոնավոր իրականացումը ցույց է տալիս, որ ATC-ն ի վիճակի է մոբիլիզացնել հատկացված միջոցները՝ լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքներ կատարելու համար:

*Ժամանակավոր աշխատակազմ (O3) – Կազմավորված*

ATC-ն հավաքագրում է գնահատաման աշխատանքների համար ժամանակավոր աշխատակազմ և վերջինիս հետ կապված ծախսերը ներառում իր բյուջեում, որոնց մեջ ըստ անհրաժեշտության ներգրավված կլինեն տարբեր առարկաների փորձագետներ, թեստ կազմողներ և թարգմանիչներ: Ժամանակավոր աշխատակազմն աշխատում է ստանդարտ պետական պայմանագրային հիմունքներով: Ժամանակավոր աշխատակազմի ընդունման ընթացակարգերը արդեն հաստատված են և կիրառվել են մի քանի տարիներ շարունակ:

*Ֆիզիկական ենթակառուցվածք (O4) – Կազմավորված*

PISA-ի Ազգային կենտրոնը (NC) կտեղակայվի ATC-ում: ATC-ն ունի բավարար ֆիզիկական ենթակառուցվածքներ լայնածավալ գնահատումներ իրականացնելու համար, այդ թվում՝ աշխատավայր անձնակազմի համար, հանդիպումների սենյակներ, ապահով գրասենյակային տարածք և տվյալների մշակման, կոդավորման գործառնությունների ու գնահատման նյութերի պահպանման ապահով հարմարություններ:

*ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն (O5).*
*Հաստատված՝ PBA-ի դեպքում, իսկ Առաջացող՝ CBA-ի դեպքում*

ATC-ն համալրված է անհրաժեշտ ՏՏ ենթակառուցվածքներով՝ PBA ձևաչափով լայնածավալ ազգային գնահատումներ իրականացնելու համար: ATC-ն ունի ՏՏ աջակցության անձնակազմ, ապահով աշխատանքային տարածքներ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Այնուամենայնիվ, ATC-ի անձնակազմի ՏՏ կարողությունների բարելավման կարիք կլինի, երբ Հայաստանն առաջին անգամ կիրառի CBA ձևաչափը PISA-2025 ստուգատեսում: Թեև ATC-ն փոքր մասշտաբով CBA ձևաչափվ ստուգատեսի անցկացման փորձառություն ունի (TIMSS 2023-ի փորձնական ստուգատեսը) CBA ձևաչափով ամբողջական ծավալով ստուգատեսի իրականացումը նոր փորձառություն կլինի: Կարողությունների անհրաժեշտ համախումբը կարող է ներառել հատուկ ծրագրային ապահովման աջակցությունը, աշակերտներին գիտելիքների փոխանցումը, կոդավորման համակարգի և գնահատող թիմի աջակցությունը ՏՏ ոլորտին առնչվող բոլոր հարցերում:

*Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր (O6) - Կազմավորված*

ATC-ում սահմանվել են անվտանգության քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ապահովելու համար գնահատման նյութերի և տվյալների ապահով և գաղտնի պահպանումը: ATC-ի բոլոր աշխատակիցները կնքում են գաղտնիության

պայմանագիր և ամբողջովին գիտակցում և հասկանում են գնահատման նյութերն ու տվյալները ապահով պահելու անհրաժեշտությունը: PISA-ի իրականացման համար վերջինիս տեխնիկական չափանիշներին համապատասխանող անվտանգության քաղաքականության և պաշտոնական ընթացակարգերի մշակման համար անհրաժեշտ կարողությունների կարիք կլինի:

*Գործիքների մշակում (O7) – Կազմավորված*

ATC-ն նշանակալից փորձ ունի քննական թեստերի գործիքների մշակման ոլորտում, այդ թվում՝ ազգային գնահատումների, ավարտական քննությունների և բուհական ընդունելության քննությունների համար: Միջնակարգ դպրոցի առարկաների թեստ կազմողների թիմը համալրվում է արտաքին մասնագետներով՝ բուհական ընդունելության քննությունների համար:

*Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն (O8) - Կազմավորվող*

Հայաստանում PISA-ի ճանաչողական նյութերը և համատեքստին բնորոշ հարցաշարերը կտեղայնացվեն անգլերեն տարբերակից (որպես սկզբնաղբյուր) և կթարգմանվեն հայերեն և, հնարավոր է, այլ լեզուներով: Այն լեզուները, որոնց գնահատման նյութերը պետք է հարմարեցվեն և թարգմանվեն, քննարկվելու և որոշվելու են PISA-ի փորձնական ստուգատեսի փուլում՝ հիմք ընդունելով PISA-ի թարգմանության և հարմարեցման ուղեցույցները: Թեև ATC-ն ունի գործիքների մշակման և որակի ապահովման բավականին զարգացած գործընթաց՝ առաջադրանքների՝ անգլերենից հայերեն թարգմանության և հարմարեցման որոշ գործընթացներ նոր կլինեն ATC-ի համար: Թարգմանության և լեզվական որակի վերահսկման համար կարողությունների զարգացման հնարավորությունը նպաստավոր կլինի Հայաստանում PISA-ի Ազգային կենտրոնի համար:

*Բնակչության թիրախային խումբ և ընտրանք (O9) - Կազմավորվող*

ATC-ն ունի ընտրանքի որոշման մասնագիտացված բաժին, ընտրանքի հիմքով ազգային լայնածավալ գնահատումներ անցկացնելու փորձառություն և կայացած EMIS համակարգի հասանելիություն: Այնուամենայնիվ, PISA-ի կողմից բնակչության թիրախային խմբի ընտրությունը հիմնված է տարիքի վրա, մինչդեռ ATC-ի փորձառությունը լայնածավալ գնահատումներում հիմնականում բնակչությանը թիրախավորում է ըստ դասարանի: Բացի այդ, PISA-ն պահանջում է, որ բացառությունները հստակորեն սահմանվեն և փաստագրվեն, թեև ներկա դրությամբ ոչ մի աշակերտ դուրս չի մնում ազգային լայնածավալ գնահատումներից: ATC-ի անձնակազմը լրացուցիչ գիտելիքների կարիք կարող է ունենալ՝ մշակելու ընտրանքի այնպիսի շրջանակ, որը կներկայացնի տվյալ տարիքային խմբի ամբողջական ծածկույթը՝ ներառելով նաև դպրոցական և աշակերտական մակարդակներից դուրս մնացած դեպքերը՝ հստակորեն սահմանված և փաստաթղթավորված ձևաչափով:

*Ուսումնասիրություններ և լոգիստիկա (O10) - Կազմավորված՝ PBA-ի դեպքում, կազմավորվող՝ CBA-ի դեպքում*

Հիմք ընդունելով TIMSS-ի անցկացման բավականաչափ փորձառությունը՝ ATC-ն շատ լավ հնարավորություններ ունի PISA-ի՝ թղթային եղանակով գնահատման հարցումներ իրականացնելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Հայաստանը մտադիր է մասնակցել համակարգչային եղանակով, ապա հարցումների ավելի բարդ գործընթացների և լոգիստիկայի անհրաժեշտություն է առաջանում: Պահանջվելու են կարողություններ՝ որակի ապահովման

մեխանիզմների պլանավորման համար՝ երաշխավորելու CBA ձևաչափով անցկացվելիք ուսումնասիրությունների՝ ստանդարտացված, մշտադիտարկված և փաստաթղթավորված լինելը:

*Տվյալների կառավարում (O11) – Կազմավորված*

ATC-ն ունի տարեկան ազգային լայնածավալ գնահատումների, բուհերի ընդունելության քննությունների, դպրոցական ավարտական քննությունների և TIMSS-ի անցկացման տվյալների կառավարման փորձ:

*Տվյալների վերլուծություն և զեկուցում (O12) - Կազմավորվող*

ATC-ն ունի տվյալների վերլուծության երեք-չորս մասնագետ, այդ թվում՝ հոգեչափության ոլորտի փորձառու մասնագետներ: Ընթացիկ տվյալների վերլուծությունը ներառում է տվյալների վերլուծություն և բուհական ընդունելության քննությունների և ազգային գնահատումների արդյունքների վերաբերյալ զեկույցների կազմում: Այնուամենայնիվ, Հայաստանը 2011 թվականից հետո TIMSS-ի արդյունքների վերաբերյալ ազգային զեկույցներ չի կազմել՝ սահմանափակ ֆինանսավորման պատճառով: Հետևաբար, PISA-ի միջազգային վերլուծական արդյունքների հիման վրա ազգային զեկույցների կազմումը նոր փորձառություն կլինի ATC-ի համար: Պահանջվում են կարողություններ՝ PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի արդյունքները և քաղաքականության վրա դրանց հետևանքները ազգային միջավայրում կիրառելու համար:

*Տարածում և հաղորդակցություն (O13) - Կազմավորվող*

Միջազգային լայնածավալ գնահատումների արդյունքները լայնորեն տարածվում/լուսաբանվում են են ԶԼՄ-ների միջոցով: Այս արդյունքները լուսաբանվում և քննարկվում են նաև ATC-ի տարեկան համաժողովում՝ որն իրենից ներկայացնում է փորում՝ կրթության ոլորտի տարբեր շահառուների համար: Այնուամենայնիվ, արդյունքները սահմանափակվում են միայն միջազգային մակարդակով, քանի որ 2011 թվականից հետո TIMSS-ի արդյունքների ազգային զեկուցներ չեն կազմվել: Բացի այդ, գնահատման արդյունքների տեղայնացմանը վերաբերող զեկույցներ չեն կազմվել տարբեր շահառուների համար: Բացահայտվել են կարողությունների զարգացման կարիքներ՝ շահառուների տարբեր խմբերի համար զեկույցներ/հաշվետվություններ կազմելու մոտեցումների տեղայնացման համատեքստում:

### *4.2.3. Անհատական մակարդակ*

*Ազգային նախագծի ղեկավար (I1) – Կազմավորված*

ATC-ի փոխտնօրենը նշանակվել է PISA-ի NPM պաշտոնում: Նա ունի որոշումներ կայացնելու իրավասություն կազմակերպության ներսում՝ ղեկավարելու PISA-ի գնահատող թիմը և վերահսկելու PISA-ի բոլոր գործողությունները: Նա ունի Հայաստանում TIMSS-ի անցկացման ազգային գնահատող թիմը ղեկավարելու փորձառություն: Նա կարող է արդյունավետ հաղորդակցվել բանավոր և գրավոր անգլերենով: Նա կարող է աշխատել PISA-2025 ստուգատեսում լրիվ դրույքով՝ PISA-2025 ստուգատեսի ամբողջ ընթացքում, և անհրաժեշտության դեպքում մասնակցել NPM-ի հանդիպումներին և միջազգային վերապատրաստումներին:

*Գնահատման գործիքների համակարգող (I2) - Կազմավորվող*

Ամենայն հավանականությամբ NPM-ը կլինի գնահատման գործիքների համակարգողը, քանի նա նպանատիպ փորձ ունի TIMSS-ի մասով: Թեև TIMSS-ի անցկացման հետ կապված նրա փորձառությունը բարձր է գնահատվում, կան գնահատման նյութերի թարգմանության և հարմարեցման որոշ ընթացակարգեր, որոնց նա ծանոթ չէ: Դրանցից մեկն այն է, որ PISA-ի համար պահանջվում է կրկնակի անկախ թարգմանության գործընթաց, որին հաջորդում է երկու առանձին թարգմանությունների համադրումը: PISA-ի տեխնիկական չափանիշներին համապատասխան կատարված թարգմանությունը, հարմարեցումը և ստուգումը կազմակերպելու կարողությունների զարգացումը կարող է շատ օգտակար լինել այս դերի համար:

*Ընտրանքի ղեկավար (I3) – Կազմավորվող*

ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել: Քանի որ ընտրանքի ղեկավարի մասին տեղեկությունը հասանելի չէր CNA-ի անցկացման պահին, այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ հիմնվելով կազմակերպչական աշխատանքներում ցուցաբերված փորձառության վրա: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանք» գլխում:

*Ուսումնասիրություններ և լոգիստիկա (I4)*
*Կազմավորված՝ PBA-ի դեպքում, Կազմավորվող՝ CBA-ի դեպքում*

Այս դերը դեռևս զբաղեցված չէ: ATC-ում գոյություն ունի բաժին, որը մասնագիտացած է լոգիստիկայի գնահատման ոլորտում, և այս աշխատանքների համար, հավանաբար, կնշանակվի այդ բաժնի աշխատակից: Այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ ելնելով կազմակերպչական աշխատանքի փորձից: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա» գլխում:

*Տվյալների ղեկավար (I5) – Կազմավորված*

Հավանական է, որ ATC-ի աշխատակիցը նշանակվի տվյալների ղեկավարի պաշտոնում: Նա Ինֆորմատիկայի և վերլուծական աշխատանքների վարչության պետն է: Նա ATC-ում աշխատում է 2005 թվականից, իսկ 2019 թվականից՝ վերոհիշյալ վարչության պետն է: Նա եղել է TIMSS-ի տվյալների ղեկավարը Հայաստանում, փորձառու է տվյալների կառավարման հետ կապված մի շարք աշխատանքներում, որոնք սովորաբար պահանջվում են լայնածավալ գնահատման ծրագրերում: Նա, ըստ անհրաժեշտության, պատրաստ կլինի ներկա գտնվել NPM հանդիպումներին և միջազգային դասընթացներին:

*Տվյալների վերլուծաբան (I6) – Կազմավորվող*

ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել: Նա ունի տվյալների վերլուծության հետ կապված մի շարք աշխատանքների փորձառություն: Այնուամենայնիվ, PISA-ն կլինի առաջին միջազգային լայնածավալ գնահատման ծրագիրը, որի շրջանակներում ազգային մակարդակի վերլուծությունները և զեկույցների կազմումը կիրականացվեն ոչ թե միջազգային կողմի, այլ PISA-ի NC-ի կողմից: Հետևաբար, PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի տվյալները ազգային միջավայրում կիրառելու կարողությունների ստեղծման հնարավորությունները շատ օգտակար կլինեն:

*Տեղեկատվական տեխնոլոգիայի համակարգող (I7)*
*Կազմավորված PBA-ի դեպքում, իսկ Կազմավորվող՝ CBA-ի դեպքում:*

ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել: Քանի որ Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգողի մասին տեղեկատվությունը հասանելի չէր CNA-ի անցկացման պահին, այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ հիմնվելով կազմակերպչական աշխատանքի փորձառության վրա: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն» գլխում:

*Անգլերեն հաղորդակցություն (I8) - կազմավորվող*

ATC-ի հիմնական անձնակազմի մեծ մասը հիմնականում վարժ տիրապետում է անգլերենին:

## 5. Եզրակացություններ

Հայաստանում Կարողությունների կարիքների գնահատումը (CNA) ցույց է տալիս, որ PISA-2025 ստուգատեսն իրականացնելու կարողությունը հիմնականում կազմավորված է հնարավորություններ ընձեռող միջավայրում, բացառությամբ նվիրատուների կողմից ֆինանսավորման, որը գնահատվում է որպես կազմավորվող, ինչը նշանակում է, որ լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններ կարող են ստեղծվել, եթե կարիքները բացահայտվեն:

Թեև Հայաստանը միջազգային և ազգային մակարդակով մեծածավալ գնահատումներ կատարելու երկարատև փորձ ունի, կազմակերպչական և անհատական մակարդակների որոշ ոլորտներում կարող են դժվարություններ ծագել, քանի որ PISA-ի մեթոդներն ու ընթացակարգերը տարբեր են և ավելի բարդ՝ համեմատած Հայաստանի նախկին փորձառության հետ: Այդ ոլորտների մեջ են մտնում գնահատող թիմը, ՏՏ ենթակառուցվածքը և աջակցությունը, թարգմանության և լեզվական որակի վերահսկողությունը, բնակչության թիրախային խումբը և ընտրանքի որոշումը, ուսումնասիրությունները և լոգիստիկան, տվյալների վերլուծությունը և զեկույցների պատրաստումը, ինչպես նաև տվյալների տարածումն ու հաղորդակցությունը: Բացի այդ, PISA-2025 ստուգատեսում CBA-ի առաջին անգամ մասնակցելը Հայաստանի համար կարող է դժվարություններ առաջացնել: Քանի որ CBA անցկացման համար անհրաժեշտ կարողությունները էականորեն տարբերվում են PBA անցկացման համար անհրաժեշտ կարողություններից, կազմակերպչական և անհատական աշխատանքներում տարբեր վարկանիշներ են տրվել CBA և PBA գնահատմանը՝ ՏՏ-ին, հետազոտական գործողություններին (ուսումնասիրություններ) և լոգիստիկային վերաբերող ցուցանիշների համար:

Անհատական աշխատանքում Ազգային կենտրոնի (NC) գլխավոր դերակատարներից երեքը (Ընտրանքի ղեկավարը, Ուսումնասիրությունների,լոգիստիկայի ղեկավարը և Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգողը) կա՛մ դեռ չէին նշանակվել, կա՛մ էլ նշանակված անձի մասին տեղեկատվությունը բացակայում էր CNA-ը մեկնարկելու ժամանակ: Հետևաբար, այս պաշտոնների վարկանիշները ենթադրաբար են որոշվել՝ հիմք ընդունելով կազմակերպչական մակարդակում ունեցած փորձը:

Ընդհանուր առմամբ, խորհուրդ է տրվում որ Հայաստանում PISA-ի NC-ը առավելագույնս օգտվի կարողությունների զարգացման հնարավորություններից, որոնք կառաջարկվեն PISA-2025 ստուգատեսի ընթացքում, հատկապես այն ոլորտների համար, որտեղ դժվարություններ են նախատեսվում: Այս հնարավորությունները կներկայացվեն Հայաստանի CBP-ում՝ որպես հաջորդ քայլ:

# Հավելված Ա. CNA-ի մանրամասն բացահայտումներ

Հավելված Ա-ում ներկայացվում են Հայաստանում CNA-ի յուրաքանչյուր հարթությանը վերաբերող մանրամասն բացահայտումները՝

- Աղյուսակ Ա. Ա1 Հնարավորություններ ընձեռող միջավայր,
- Աղյուսակ Ա. Ա2 Կազմակերպչական մակարդակ, և
- Աղյուսակ Ա. Ա3 Անհատական մակարդակ

Յուրաքանչյուր կարողության ցուցանիշի համար տրվում է վարկանիշ և հիմնավորում՝ կարողությունների ու կարիքների նկարագրությամբ: Կարողության բացահայտված կարիքները նշված են վերջին սյունակում:

## Աղյուսակ Ա. Ա1.  Հնարավորություններ ընձեռող միջավայր

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| E1 Գնահատման համակարգի կառուցվածք | Լայնածավալ ստուգատեսի ծրագրերը գնահատման համակարգի մի մասն են կազմում՝ ապահովելու ուսումնառության առանցքային բաղադրիչների մասով աշակերտի կատարողականի և տարրական ու միջնակարգ կրթության հիմնական փուլերի համատեքստին բնորոշ տվյալները կրթական համակարգի համապատասխան մակարդակներում: | Կազմավորված | Հայաստանը 2010 թվականից իրականացնում է ազգային ուսումնասիրություններ (ընտրանքի վրա հիմնված ամենամյա ազգային լայնածավալ գնահատման ծրագիր) և TIMSS (ընտրանքի վրա հիմնված 4 տարին մեկ անցկացվող միջազգային լայնածավալ գնահատման ծրագիր)՝ 2003 թվականից: Գնահատման այս լայնածավալ ծրագրերը Հայաստանում գնահատման համակարգի մի մասն են կազմում՝ Հայոց պատմություն և գրականություն, Բնագիտություն, Մաթեմատիկա և Օտար լեզվի ուսուցում առարկաների կատարողականի վերաբերյալ տվյալներ ստանալու համար: Դրանք նախատեսված են 4-րդ դասարանի (հանրակրթական դպրոցի տարրական դասարանի վերջին տարի) և 8-րդ դասարանի (միջնակարգ կրթության առաջին փուլի նախավերջին տարի) աշակերտների համար: Գնահատման լայնածավալ ծրագրերը տրամադրում են նաև համապատասխան համատեքստին բնորոշ տվյալներ: | |
| E2 Օրենսդրություն կամ քաղաքականություն | Գնահատման լայնածավալ ծրագրերը, որոնք գնահատման համակարգի մաս են կազմում, ուղղորդվում են օրենսդրությամբ կամ քաղաքականությամբ: | Կազմավորված | 2011 թվականի հունիսի 23-ի ««Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի մասնակցությունը գնահատման միջազգային լայնածավալ ծրագրերին, մասնավորապես՝ TIMSS-ին, PIRLS-ին և PISA-ին: Դրանից հետո մշակվել է քաղաքականության նոր ռազմավարական փաստաթուղթ:<br>Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2022 թվականի հունիսի 28-ին հաստատել է ««ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին»» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետև՝ «Ծրագիրը»): Այնուհետև, 2022 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Ծրագիրը: Ծրագրի մինչև 2030 թվականի արդյունքային շրջանակում է միջազգային գնահատումների (ինչպիսին PISA-ն է) արդյունքների բարելավման ցուցանիշը, ինչը նույնպես ցույց է տալիս նման գնահատումների կարևորությունը Հայաստանի համար: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| E3 Ղեկավարություն | Կառավարությունը բարձր ղեկավարության մակարդակով ցուցաբերում է քաղաքական կամք՝ ի աջակցություն լայնածավալ գնահատումների: Մշակվել է ռազմավարություն՝ խրախուսելու համար գնահատմանը մասնակցությունը, գնահատման արդյունավետ իրականացումը և արդյունքների տարածումը/լուսաբանումը ազգային բոլոր շահառուների շրջանակում: | Կազմավորված | Կրթության նախարարությունը և ATC-ն նպաստում են ազգային և միջազգային լայնածավալ գնահատումների իրականացմանը: Դա երևում է այս հաստատությունների կայքերում տեղադրված հոդվածներում, մամուլում, հանդիպումներում, սեմինարներում, դասընթացներում և հեռուստատեսային տեսանյութերում: Հայաստանի մասնակցությունը միջազգային լայնածավալ գնահատումներին լայնորեն քննարկվում և համակարգվում է Կրթության նախարարությունում, ինչը վկայում է լայնածավալ գնահատմանն աջակցող հետևողական ղեկավարության մասին: Մասնավորապես, Կրթության նախարարությունը 2022 թվականի հուլիսի 12-ին կազմակերպել է PISA-ի մեկնարկի միջոցառում CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի՝ երկիր կատարած մեկշաբաթյա այցի ընթացքում, որտեղ Կրթության նախարարության փոխնախարարը (ով այժմ նախարարն է) անդրադարձել է Հայաստանում PISA-ին մասնակցելու կարևորությանը, որը ներկայացվել է նախարարության կայքում հրապարակված հոդվածով: Բացի այդ, թե՛ Կրթության նախարարության, և թե՛ ATC-ի ներկայացուցիչների կանոնավոր մասնակցությունը PISA CBIS-ի առցանց հանդիպումներին վկայում է Հայաստանում PISA-ի իրականացումը խրախուսող բարձր ղեկավարության մասին: | |
| E4 Ինստիտուցիոնալ կարգավորումներ | Կառավարությունը կայացած ինստիտուցիոնալ կարգավորումներ ունի լայնածավալ գնահատումների համար՝ հաշվետվողականության հստակ մեխանիզմներով: | Կազմավորված | ATC-ն Հայաստանում լայնորեն ճանաչված է որպես աշակերտների գնահատման առաջատար կառույց: ATC-ն ինքնավար միավոր է, որը ներկայում գործում է Կրթության նախարարության ենթակայությամբ: Նախկինում այն գործել է Կառավարության/Վարչապետի աշխատակազմի ենթակայությամբ: ATC-ի պարտականությունների մեջ են մտնում՝<br>• Դպրոցի ավարտական քննությունների կազմակերպումը 12-րդ դասարանում,<br>• Ավարտական քննությունների կազմակերպումը 4-րդ և 9-րդ դասարաններում,<br>• Համալսարանի ընդունելության քննությունների կազմակերպումը,<br>• Արտաքին գնահատումներն ընտրանքային դպրոցներում տարին երկու անգամ պարբերականությամբ՝ որպես մոնիթորինգի գործիք աշակերտի առաջադիմությունը ստուգելու և օժանդակելու ուսուցիչներին դասարանային գնահատումների իրականցման հարցում՝ օգտագործելով տարբեր թեստավորման մեթոդներ,<br>• Ազգային ուսումնասիրությունների իրականացում,<br>• Միջազգային ստուգատեսների կազմակերպում, ներառյալ՝ TIMSS և PISA:<br>ATC-ն հաշվետու է Կրթության նախարարին: ATC-ն ղեկավարում է հիմնադրի (Հայաստանի Հանրապետությունը)՝ ի դեմ Հայաստանի Հանրապետության կառավարության, լիազորված պետական մարմնի՝ ի դեմ Կրթության նախարարության, և գործադիր մարմնի՝ ի դեմ ATC-ի տնօրենի կողմից: Տնօրենը Կրթության նախարարություն է ներկայացնում կազմակերպության տարեկան բյուջեի նախագիծը, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված եռամսյակային, տարեկան և այլ հաշվետվություններ: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| E5a Ֆինանսավորում | Կառավարությունը բավարար և կայուն ֆինանսավորում է տրամադրում լայնածավալ գնահատումների համար: | Կազմավորված | Հայաստանը կանոնավոր կերպով մասնակցել է TIMSS-ին (2003, 2007, 2011, 2015, 2019, 2023) և արդեն ապահովել է PISA-2025 ստուգատեսին մասնակցելու ֆինանսավորումը: Բացի այդ, Կրթության նախարարությունը 2010 թվականից սկսած ամեն տարի իրականացնում է ազգային ուսումնասիրություններ: Սրանք վկայում են կառավարության կողմից միջազգային և ազգային լայնածավալ գնահատումների համար կայուն ֆինանսավորման տրամադրման մասին: | |
| E5b Նվիրատուների կողմից ֆինանսավորում | Կառավարությունը ֆինանսավորում է ստանում նվիրատուներից՝ լայնածավալ գնահատումներ անցկացնելու համար: | Կազմավորվող | Հայաստանում լայնածավալ գնահատման ծրագրերի իրականացումը ներկայում ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից, սակայն լայնածավալ գնահատման հետ կապված կարողությունների զարգացման որոշ միջոցառումներ ստանում են արտաքին ֆինանսավորում: Օրինակ, CBIS-ի «Պլանավորման և նախապատրաստական աշխատանքների աջակցություն» նախագիծը, որին մասնակցում է Հայաստանը, ստանում է արտաքին ֆինանսավորում: Մեկ ուրիշ օրինակ՝ «Գլոբալ գործընկերությունը կրթության ոլորտում» նախագիծը ֆինանսավորում է հատկացնում Կրթության նախարարությանը՝ Ուսուցման գնահատման ազգային համակարգերի (ANLAS) վերլուծություն կատարելու համար՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ: ANLAS-ը կարողությունների զարգացման ծրագիր է՝ ուսուցման գնահատման ազգային համակարգերը վերլուծելու համար:<br>Բացի վերոնշյալ օրինակներից, նվիրատուների կողմից ֆինանսավորվող այլ կոնկրետ կարիքներ կարծես թե չեն հայտնաբերվել, Հայաստանում լայնածավալ գնահատումների անցկացման աջակցության հարցում: Այնուամենայնիվ, Կրթության նախարարության շարունակական ջանքերը՝ ներգրավելու զարգացման հարցերով զբաղվող գործընկերների, կարող են հետագայում հաջողությամբ պսակվել նվիրատուների կողմից ֆինանսավորում ստանալու հարցում՝ ուղղված լայնածավալ գնահատումների աջակցությանը, եթե լրացուցիչ կարիքներ ի հայտ գան: | Լայնածավալ գնահատումների համար նվիրատուների կողմից ֆինանսավորման հնարավորությունները ուսումնասիրելու կարողություն, եթե ի հայտ գան լրացուցիչ կարիքներ: |
| E6 Գնահատման տվյալների օգտագործում | Կառավարությունը և հիմնական շահագրգիռ կողմերը հնարավորություն ունեն օգտագործելու լայնածավալ գնահատումների տվյալները՝ փաստերի վրա հիմնված կրթական քաղաքականություն մշակելու և պլանավորում իրականացնելու համար: | Կազմավորված | CNA հարցաշարերի և Հայաստանում կրթության վերաբերյալ TIMSS-ի փաստաթուղթը ցույց են տալիս, որ ազգային և միջազգային գնահատումների տվյալները օգտագործվել են Հայաստանում փաստերի վրա հիմնված կրթական քաղաքականություն մշակելու և պլանավորման համար, այդ թվում՝<br>• Կրթության ոլորտի պլանավորում,<br>• Մոնիթորինգ և գնահատում,<br>• Ռեսուրսների/ֆինանսավորման բաշխում,<br>• Ուսումնական ծրագրի մշակում,<br>• Դպրոցի զարգացում,<br>• Դպրոցի կրթական աշխատակազմի զարգացում (օրինակ՝ ուսուցիչների վերապատրաստողների, ուսուցիչների, դպրոցների տնօրենների որակավորում և մասնագիտական զարգացում), | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| | | | • Ուսուցիչների մասնագիտական զարգացում: | |
| E7 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ | Կառավարությունը մշակել է դպրոցի, ուսուցիչների և աշակերտների տվյալների և տեղեկատվության հավաքման, ինտեգրման, մշակման, պահպանման և օգտագործման համակարգ: | Կազմավորված | Հայաստանում EMIS-ը կառավարվում է NCET-ի (ԿՏԱԿ) կողմից: PISA-ի CBIS-ի շրջանակներում երկիր կատարած այցի ժամանակ NCET-ին կատարած այցը ցույց տվեց, որ Հայաստանը մշակել է դպրոցին, ուսուցիչներին և աշակերտներին վերաբերող տվյալների և տեղեկատվության հավաքման, ինտեգրման, մշակման, պահպանման և օգտագործման համապարփակ համակարգ:<br>• EMIS-ը էլեկտրոնային համակարգ է, որին կապակցված են Հայաստանի բոլոր պետական և ոչ պետական դպրոցները:<br>• NCET-ը էլեկտրոնային եղանակով տվյալներ է հավաքում յուրաքանչյուր դպրոցից իրական կամ դրան մոտ ժամանակահատվածում: Տվյալների մեջ մտնում են աշակերտների հաճախելիությունը, բոլոր առարկաների գնահատումների արդյունքները, ամենօրյա տնային աշխատանքների մասին տեղեկություն և յուրաքանչյուր աշակերտի մասին առանձին մանրամասն տեղեկություն:<br>• Տվյալները կենտրոնացված ձևով հավաքվում և կառավարվում են NCET-ի կողմից և հասանելի են (անվտանգային սահմանափակումներով) դպրոցներին և ծնողներին՝ դիտելու համար:<br>• Տվյալները հավաքվում են նաև մանկապարտեզներից, դպրոցներից, քոլեջներից և համալսարաններից:<br>• Կայքէջը գործուն համակարգ է: Այստեղ կարելի է նախընտրելի ֆիլտրերը կիրառելով տվյալներ գտնել աշակերտների, աշակերտական խմբերի, դասարանների, դպրոցների, մարզերի և այլնի վերաբերյալ՝ դիտելով ու համեմատելով ստացված արդյունքներն ու այլհամապատասխան տվյալներ:<br>• NCET-ը նաև օգտագործում է համակարգը՝ սովորողների (դեռևս միայն 9-րդ և 12-րդ դասարանների) ավարտական փաստաթղթերը տրամադրելու համար էլեկտրոնային ձևաչափով: | |

## Աղյուսակ Ա. Ա2. Կազմակերպչական մակարդակ

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| Օ1 Գնահատման անձնակազմ | Ձևավորված է գնահատման նվիրված և հմուտ անձնակազմ, որը կատարում է լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքներ, այդ թվում՝ կառավարում, գործիքների մշակում, թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն, թեստերի կազմում, ընտրանքի որոշում, հետազոտություններ, լոգիստիկայի, տվյալների կառավարում, տվյալների վերլուծություն, զեկույցների պատրաստում և տվյալների տարածում: Գնահատման կենտրոնի անձնակազմի համար նախատեսված է կարողությունների զարգացում: | Կազմավորվող | Թեև PISA Ազգային կենտրոնի ստեղծումը ընթացքի մեջ էր CNA-ի ներդրման ժամանակ, ATC-ում արդեն գոյություն ունեն կազմակերպչական կարողություններ՝ նվիրված և հմուտ գնահատող անձնակազմ ձևավորելու համար: ATC-ի փոխտնօրենը, ով ունի TIMSS-ի անցկացման բավականաչափ փորձ, նշանակվել է PISA ստուգատեսի Ազգային նախագծի ղեկավարի պաշտոնում: ATC-ն օգտագործել է TIMSS-ի փորձը՝ 2010 թվականից ի վեր ամեն տարի մշակելու և իրականացնելու ազգային լայնածավալ գնահատումներ, այդ թվում՝ կառավարում, գործիքների մշակում, թեստերի կազմում, հետազոտություններ, տվյալների կառավարում և վերլուծություն, ինչպես նաև զեկույցների պատրաստում և տվյալների տարածում: ATC-ի աշխատակազմը ներառում է հետևյալ դերակատարներին՝<br>• ATC-ն ունի թեստեր մշակողներ, ինչպես նաև հրավիրված մասնագետներ: Նրանք նաև կիրառում են համակարգչային գնահատում ավարտական և ընդունելության քննությունների համար, ունեն համապատասխան համակարգչային սարքավորումներ և անձնակազմ, և անհրաժեշտության դեպքում TIMSS-ի շրջանակում ներգրավում են գնահատողների:<br>• Անհրաժեշտության դեպքում ATC-ն դիմում է արտաքին մասնագետների օգնությանը՝ թեստերի նյութերը հայերեն և այլ լեզուներով թարգմանելու համար:<br>• Ազգային ուսումնասիրությունների համակարգումը, նախագծումը, նյութերի մշակումը, ընտրանքի որոշումը, գնահատման | PISA-ի տեխնիկական ստանդարտներին համաձայն CBA անցկացնելու կարողություն: |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| | | | իրականացումը, վերլուծությունը և զեկույցների պատրաստումը կատարվում են ATC-ում:<br><br>Թեև ATC-ն ունի այս արժեքավոր փորձը, որոշ ոլորտներ, օրինակ՝ ընտրանքի ձևավորումը, լեզվական որակի վերահսկումը, վերլուծությունների ու զեկույցների պատրաստումը, կարող են դժվարություններ առաջացնել, քանի որ PISA-ի որոշ մեթոդներ և ընթացակարգեր տարբեր են և ավելի բարդ՝ համեմատած այլ միջազգային լայնածավալ գնահատումների հետ: Բացի այդ, Հայաստանը մտադիր է առաջին անգամ PISA-2025 ստուգատեսում CBA կիրառել, և դա կարող է լրացուցիչ դժվարություններ առաջացնել: | |
| O2 Ֆինանսավորման մոբիլիզացում | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնը ի վիճակի է մոբիլիզացնել հատկացված միջոցները՝ լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքներ կատարելու համար: Ֆինանսավորումը նախատեսված է նաև գնահատման կենտրոնի անձնակազմի կարողությունների զարգացման համար: | Կազմավորված | ATC-ի կողմից TIMSS-ի և ազգային ուսումնասիրությունների կանոնավոր իրականացումը ցույց է տալիս, որ ATC-ն ի վիճակի է մոբիլիզացնել հատկացված միջոցները՝ լայնածավալ գնահատումների հետ կապված տարբեր աշխատանքներ կատարելու համար: | |
| O3 Ժամանակավոր աշխատակազմ | Գործում են հստակ և թափանցիկ չափանիշներ ու ընթացակարգեր՝ ժամանակավոր անձնակազմի (թարգմանիչներ, համաձայնեցնողներ, թեստերի անցկացման ադմինիստրատորներ, որակի վերահսկիչներ, շարադրողական պատասխաններով հարցերի կոդավորողներ, զբաղմունքային տվյալների կոդավորողներ, տվյալների մուտքագրման և տվյալների կառավարման աջակցության աշխատակազմ) աշխատանքի ընդունման և վարձատրության համար: | Կազմավորված | ATC-ն հավաքագրում է գնահատման աշխատանքների համար ժամանակավոր աշխատակազմ և վերջինիս հետ կապված ծախսերը ներառում իր բյուջեում, որոնց մեջ ըստ անհրաժեշտության ներգրավված կլինեն տարբեր առարկաների փորձագետներ, թեստ կազմողներ և թարգմանիչներ: Ժամանակավոր աշխատակազմն աշխատում է ստանդարտ պետական պայմանագրային հիմունքներով: Ժամանակավոր աշխատակազմի ընդունման ընթացակարգերը արդեն հաստատված են և կիրառվել են մի քանի տարիներ շարունակ: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O4 Ֆիզիկական ենթակառուցվածք | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնն ունի անհրաժեշտ ֆիզիկական ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ապահով գրասենյակային տարածք, հանդիպումների սենյակներ, միջազգային հեռախոսակապով հեռախոսներ և տվյալների մշակման, կոդավորման գործառնությունների ու գնահատման նյութերի պահպանման ապահով հարմարություններ: | Կազմավորված | PISA-ի Ազգային կենտրոնը (NC) կտեղակայվի ATC-ում: ATC-ն ունի բավարար ֆիզիկական ենթակառուցվածքներ լայնածավալ գնահատումներ իրականացնելու համար, այդ թվում՝ աշխատանքային տարածք անձնակազմի համար, հանդիպումների սենյակներ, ապահով գրասենյակային տարածք և տվյալների մշակման, կոդավորման գործառնությունների և գնահատման նյութերի պահպանման ապահով հարմարություններ: | |
| O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն | Լայնածավալ գնահատումներ իրականացնող կենտրոնն ունի բավարար ՏՏ ենթակառուցվածք, մասնավորապես՝ Windows-ով աշխատող համակարգիչներ՝ Microsoft Office-ի ամենաթարմ ծրագրով, բարձր թողունակությամբ ինտերնետային կապ, անվտանգ ցանցային միջավայր, անվտանգ սերվերներ, ամպային հասանելիություն/հիշողություն, տպիչներ, պատճենահանող սարքեր, սկաներներ և էլեկտրոնային փոստ: Ընտրվում, ձեռք են բերվում, տեղադրվում և պահպանվում են անհրաժեշտ մասնագիտացված ծրագրերի լիցենզիաները: ՏՏ անձնակազմը հասանելի է ՏՏ ոլորտին առնչվող բոլոր հարցերում գնահատող թիմին օգնելու համար: | PBA-ի համար՝ Կազմավորված<br>CBA-ի համար՝ Կազմավորվող | ATC-ն համալրված է անհրաժեշտ ՏՏ ենթակառուցվածքներով՝ PBA ձևաչափով լայնածավալ ազգային գնահատումներ իրականացնելու համար: ATC-ն ունի ՏՏ աջակցության անձնակազմ, ապահով աշխատանքային տարածքներ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Այնուամենայնիվ, ATC-ի անձնակազմի ՏՏ կարողությունների բարելավման կարիք կլինի, երբ Հայաստանն առաջին անգամ կիրառի CBA ձևաչափը PISA-2025 ստուգատեսում: Թեև ATC-ն փոքր մասշտաբով CBA ձևաչափով ստուգատեսի անցկացման փորձառություն ունի (TIMSS 2023-ի փորձնական ստուգատեսը) CBA ձևաչափով ամբողջական ծավալով ստուգատեսի իրականացումը նոր փորձառություն կլինի: Կարողությունների անհրաժեշտ համախումբը կարող է ներառել հատուկ ծրագրային ապահովման աջակցությունը, աշակերտներին գիտելիքների փոխանցումը, կոդավորման համակարգի և գնահատող թիմի աջակցությունը ՏՏ ոլորտին առնչվող բոլոր հարցերում: | CBA անցկացման հետ կապված ATC-ի անձնակազմի կարողությունները, այդ թվում՝ հատուկ համակարգչային ծրագիրներով աջակցությունը, աշակերտներին գիտելիքների փոխանցումը, լոգիստիկան, կոդավորման համակարգի և գնահատման անձնակազմի աջակցությունը: |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O6 Անվտանգության քաղաքականություն և ընթացակարգեր | Սահմանվել են անվտանգության քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ապահովելու համար գնահատման նյութերի և տվյալների ապահով և գաղտնի պահպանումը: Իրավական պարտավորեցնող միջոցներ են ձեռնարկվել՝ սահմանված պահանջներին հետևելու համար (օրինակ՝ գաղտնիության պայմանագրեր): | Կազմավորված | ATC-ում սահմանվել են անվտանգության քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ապահովելու համար գնահատման նյութերի և տվյալների ապահով և գաղտնի պահպանումը: ATC-ի բոլոր աշխատակիցները կնքում են գաղտնիության պայմանագիր և ամբողջովին գիտակցում և հասկանում են գնահատման նյութերն ու տվյալները ապահով պահելու անհրաժեշտությունը: PISA-ի իրականացման համար անհրաժեշտ անվտանգության քաղաքականությունը և ընթացակարգերը կարող են հարմարեցվել PISA-2025 ստուգատեսի ժամանակ՝ ըստ PISA-ի տեխնիկական ստանդարտների: | |
| O7 Գործիքների մշակում | Գործում են որակի ապահովման մեխանիզմներ, որոնք երաշխավորում են գնահատման գործիքների (թեստեր և համատեքստին բնորոշ հարցաշարեր) վստահելիությունը, վավերականությունը և արդարությունը: | Կազմավորված | ATC-ն նշանակալից փորձ ունի քննական թեստերի գործիքների (և ճանաչողական, և համատեքստին բնորոշ հարցաշարերի) մշակման ոլորտում, այդ թվում՝ ազգային գնահատումների, ավարտական քննությունների և բուհական ընդունելության քննությունների համար:ATC-ն ունի թեստաբանության վարչություն՝ առանձին առարկաների գծով քննական թեստեր կազմող մասնագետներ, մասնավորապես՝ լեզուներ, բնագիտություն, մաթեմատիկա և այլ առարկաներից: Միջնակարգ դպրոցի առարկաների թեստ կազմողների թիմը համալրվում է արտաքին մասնագետներով՝ բուհական ընդունելության քննությունների համար:<br><br>ATC-ն անցկացնում է դասընթացներ թեստ մշակողների համար: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O8 Թարգմանություն և լեզվական որակի վերահսկողություն | Այնտեղ, որտեղ գնահատման գործիքները մշակված են մի քանի լեզուներով, լեզվական որակի ապահովման ընթացակարգերը կիրառվում են ՝ ապահովելու համար, որ առաջադրանքների՝ լեզվական և հոգեչափական առումներով համարժեք լինելը տարբեր լեզուներով: | Կազմավորվող | Թեև ATC-ն ունի առաջադրանքների՝ անգլերենից հայերեն թարգմանության համար գործիքների մշակման և որակի ապահովման բավականին զարգացած ընթացակարգեր, PISA-ի թարգմանության և հարմարեցման որոշ ընթացակարգեր նորություն կլինեն ATC-ի համար: Մասնավորապես, PISA-ի համար պահանջվում է կրկնակի անկախ թարգմանության գործընթաց, որին հաջորդում է երկու առանձին թարգմանությունների համադրումը: PISA ստուգատեսում կտրամադրվեն երկու բնօրինակ տարբերակներ (անգլերեն և ֆրանսերեն) և կպահանջվի որ յուրաքանչյուր բնօրինակ տարբերակը թարգմանվի գնահատման լեզվով (լեզուներով): Այս պահի դրությամբ ATC-ն նախատեսնում է կիրառել անգլերեն բնօրինակ տարբերակը՝ գնահատման գործիքները հարմարեցնելու/թարգմանելու համար՝ հաշվի առնելով PISA-ի գնահատման ոլորտում մասնագիտացած ֆրանսերեն թարգմանիչներ գտնելու նախատեսելի դժվարությունը:<br>Թարգմանությունը պետք է կատարվի «OmegaT» կոչվող թարգմանչական մասնագիտացված ծրագրաշարով: Բացի դրանից, ավելի շատ թեստային առաջադրանքներ պետք է հարմարեցվեն և թարգմանվեն CBA-ի համար, քան PBA-ի, քանի որ CBA-ի համար նախատեսված է հարմարեցված թեստ, որտեղ ներառված են ավելի շատ առաջադրանքներ, քան PBA-ում: Թարգմանության և լեզվական որակի վերահսկման ոլորտում կարողությունների զարգացման հնարավորությունը նպաստավոր կլինի Հայաստանում PISA-ի Ազգային կենտրոնի համար: | ATC-ի անձնակազմի՝ PISA-ի լեզվական որակի ապահովման ընթացակարգերի համաձայն թարգմանության/հարմարեցման աշխատանքները կատարելու կարողություններ |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O9 Բնակչության թիրախային խումբ և ընտրանքի որոշում | Ընտրանքի շրջանակն ամբողջական պատկերացում է տալիս որոշված թիրախային բնակչության մասին: Բնակչության թիրախային խմբի գնահատման գործնական հանգամանքները նկատի են առնվում ընտրանքի մշակման ժամանակ: Բացառությունները հստակ ձևակերպված և փաստաթղթավորված են: | Կազմավորվող | ATC-ն ունի ընտրանքի որոշման մասնագիտացած բաժին, ընտրանքի հիմքով ազգային մեծածավալ գնահատումներ անցկացնելու փորձառություն և կայացած EMIS համակարգի հասանելիություն: Սակայն PISA-ն թիրախավորում է բնակչությունն ըստ տարիքի, մինչդեռ ATC-ի փորձառությունը մեծածավալ գնահատումների ոլորտում ըստ դասարան թիրախավորմամբ է: Բացի այդ, PISA-ն պահանջում է, որ բացառությունները հստակորեն սահմանվեն և փաստաթղթավորվեն, թեև ներկա դրությամբ ոչ մի աշակերտ դուրս չի մնում ազգային լայնածավալ գնահատումներից: ATC-ի անձնակազմը լրացուցիչ գիտելիքների կարիք կարող է ունենալ՝ մշակելու ընտրանքի այնպիսի շրջանակ, որը կներկայացնի տվյալ տարիքային խմբի ամբողջական ծածկույթը՝ ներառելով նաև դպրոցական և աշակերտական մակարդակներից դուրս մնացած դեպքերը՝ հստակորեն սահմանված և փաստաթղթավորված ձևաչափով: | ATC-ի անձնակազմի կարողություններ՝ որոշելու ընտրանքի շրջանակը, որը տալիս է բնակչության տարիքային թիրախային խմբի ամբողջական պատկերացում, և որտեղ հստակորեն սահմանված և փաստաթղթավորված են դուրս մնացած դեպքերը՝ դպրոցական և աշակերտական մակարդակներ ում: |
| O10 Ուսումնասիրություններ և լոգիստիկա | Գործում են որակի ապահովման մեխանիզմներ՝ ապահովելու համար ուսումնասիրությունների՝ ստանդարտներին համապատասխանությունը, մոնիթորինգը և փաստաթղթավորումը: Առկա են հարթություններ՝ ապահովելու համար մասնակցությունը և ստուգելու ստացված պատասխանների արդյունքները: | Կազմավորված՝ PBA-ի դեպքում<br>Կազմավորվող՝ CBA-ի դեպքում | Հիմք ընդունելով TIMSS-ի անցկացման բավականաչափ փորձառությունը՝ ATC-ն շատ լավ հնարավորություններ ունի PISA-ի՝ թղթային եղանակով գնահատման հարցումներ իրականացնելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Հայաստանը մտադիր է մասնակցել համակարգչային եղանակով, ապա հարցումների ավելի բարդ գործընթացների և լոգիստիկայի անհրաժեշտություն է առաջանում: Պահանջվելու են կարողություններ՝ որակի ապահովման մեխանիզմների պլանավորման համար՝ երաշխավորելու CBA ձևաչափով անցկացվելիք ուսումնասիրությունների՝ ստանդարտացված, մշտադիտարկված և փաստաթղթավորված լինելը: | Որակի ապահովման մեխանիզմներ մշակելու կարողություն՝ երաշխավորելու համար, որ CBA ժամանակ հարցումները/ուսումնասիրությու նները լինելու են ստանդարտացված, մշտադիտարկված և փաստաթղթավորված: |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O11 Տվյալների կառավարում | Գործում են որակի ապահովման մեխանիզմներ ուղղված՝ վերջնական տվյալների բազայի՝ անհամապատասխանություններից և սխալներից զերծ լինելուն, համապատասխան կառուցվածք և փաստաթղթավորում ունենալուն: | Կազմավորված | ATC-ն ունի տարեկան ազգային լայնածավալ գնահատումների, բուհերի ընդունելության քննությունների, դպրոցական ավարտական քննությունների և TIMSS-ի անցկացման տվյալների կառավարման փորձ: ATC-ի փորձառությունը համապատասխանում է TIMSS-ի տվյալների կառավարման որակի ապահովմանը: ATC-ում կա տվյալների ղեկավարի պաշտոն: | |
| O12 Տվյալների վերլուծություն և զեկույցների պատրաստում | Կիրառվում են տեխնիկական տեսանկյունից վստահելի և հիմնավոր տվյալների վերլուծության մեխանիզմներ՝ վերլուծական արդյունքներ ստանալու համար, որոնք թույլ են տալիս վավեր և օգտակար եզրակացություններ անել հետաքրքրություն ներկայացնող բնակչության հատվածի կամ հատվածների վերաբերյալ: Վերլուծական արդյունքները ամբողջովին փաստաթղթավորված և վերարտադրելի են: | Կազմավորվող | ATC-ն ունի տվյալների վերլուծության երեք-չորս մասնագետ, այդ թվում՝ հոգեչափության ոլորտի փորձառու մասնագետներ: Ընթացիկ տվյալների վերլուծությունը ներառում է տվյալների վերլուծություն և բուհական ընդունելության քննությունների և ազգային գնահատումների արդյունքների վերաբերյալ զեկույցների կազմում: Ինչ վերաբերում է TIMSS-ի արդյունքների վերլուծությանը և զեկույցների կազմմանը, ապա միջազգային մակարդակով դրանք իրականացվել են միջազգային դերակատարների կողմից: Հայաստանը ներկայացրել է TIMSS-ի արդյունքների ազգային զեկույցները 2003, 2007 և 2011 թվականներին (ոչ ATC-ի կողմից):<br>Սակայն, TIMSS-ի արդյունքների ազգային զեկույցներ 2011 թվականից հետո չեն կազմվել՝ սահմանափակ ֆինանսավորման պատճառով: Հետևաբար, միջազգային գնահատման արդյունքների հիման վրա ազգային զեկույցի կազմումը նոր փորձառություն կլինի ATC-ի համար: Պահանջվում են կարողություններ՝ PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի արդյունքները և քաղաքականության վրա դրանց հետևանքները ազգային միջավայրում կիրառելու համար: | PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի արդյունքներից ստացված բացահայտումներն ազգային միջավայրում օգտագործելու կարողություն: |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| O13 Տարածում և հաղորդակցություն | Զեկույցների կազմման և տվյալների տարածման/լուսաբանման համապատասխան միջոցներն ու մոտեցումները հարմարեցված են տարբեր շահագրգիռ կողմերին և նպաստում են այդ խմբերի կողմից գնահատման տվյալների և արդյունքների պատշաճ և արդյունավետ կիրառմանը: | Կազմավորվող | Միջազգային լայնածավալ գնահատումների արդյունքները լայնորեն տարածվում են ԶԼՄ-ների միջոցով: ATC-ն ունի տարեկան համաժողով, որն իրենից ներկայացնում է փորում՝ TIMSS-ի, ազգային գնահատումների և քննությունների արդյունքները փոխանցելու համար հիմնական շահագրգիռ կողմերին, որոնց մեջ մտնում են՝ նախարարության պաշտոնյաներ, դպրոցների տնօրեններ և կրթության այլ մասնագետներ: TIMSS արդյունքների մասին զեկույցը հայտարարվում է հեռուստատեսությամբ, տպագիր զեկույցները ևս հասանելի են դառնում հանրության համար: Այնուամենայնիվ, TIMSS-ի զեկույցները սահմանափակվում են միայն միջազգային մակարդակով, քանի որ TIMSS-ի արդյունքների ազգային զեկույցները չեն կազմվել 2011 թվականից հետո (տե՛ս O12 ցուցանիշը): Բացի այդ, շահառուների տարբեր խմբերի  համար զեկույցներ կազմելու մոտեցումների տեղայնացման | Տարբեր շահագրգիռ կողմերին զեկույցներ ներկայացնելու և տարածելու համար անհրաժեշտ եղանակները և մոտեցումները հարմարեցնելու կարողություն: |

## Աղյուսակ Ա. Ա3. Անհատական մակարդակ

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| I1 Ազգային նախագծի ղեկավար | Գնահատման կենտրոնում ունեն հմուտ և փորձառու Ազգային ծրագրի ղեկավար (NPM), որը որոշումներ կայացնելու իրավասություն ունի, ղեկավարում է գնահատման անձնակազմը և վերահսկում գնահատման հետ կապված բոլոր գործողությունները: NPM-ը կարող է անգլերեն լեզվով (գրավոր և բանավոր) արդյունավետ կերպով հաղորդակցվել: NPM-ն աշխատում է լրիվ դրույքով գնահատման ամբողջ ընթացքում: | Կազմավորված | ATC-ի փոխտնօրենը նշանակվել է PISA-ի Ազգային նախագծի ղեկավարի (NPM) պաշտոնում: Նա ունի որոշումներ կայացնելու իրավասություն կազմակերպության ներսում՝ ղեկավարելու PISA-ի գնահատման անձնակազմը և վերահսկելու PISA-ի բոլոր գործողությունները: Նա կարող է անգլերեն լեզվով գրավոր և բանավոր արդյունավետ կերպով հաղորդակցվել: Նա կարող է աշխատել PISA-2025 ստուգատեսում լրիվ դրույքով՝ PISA-2025 ստուգատեսի ամբողջ ընթացքում, և անհրաժեշտության դեպքում մասնակցել NPM-ի հանդիպումներին և միջազգային վերապատրաստմանը:<br><br>Նա ունի Հայաստանում TIMSS-ի անցկացման գնահատման անձնակազմը ղեկավարելու փորձառություն: Նա պատասխանատու է եղել այլ լայնածավալ գնահատումների համար՝ գնահատման անձնակազմ ստեղծելու, գնահատման մասին իրազեկվածության բարձրացման համար գովազդային նյութերի կիրառման, աշխատակիցներին վերահսկելու, որպեսզի կատարեն հանձնարարությունները, միջազգային գործընկերների հետ շարունակական կապի պահպանման, գնահատման նյութերի էլեկտրոնային եղանակով տարածման, քննությունների անցկացման ադմինիստրատորներին աշխատանքի ընդունման, քննությունների անցկացման ադմինիստրատորներին ստանդարտացված նյութերին և դրանց մատուցմանը ծանոթացման, քննությունների անցկացման որակի վերահսկման, անվտանգության քաղաքականությանը ու ընթացակարգերին մշտապես հետևելու և հիմնական արդյունքները հաղորդելու համար ազգային սփռման ռազմավարություն կիրառելու համար:<br><br>Նա ակնկալում է, որ ընտրանքի շրջանակի մշակումը, տվյալների վերլուծությունը և զեկույցների կազմումը կլինեն PISA-2025 ստուգատեսի ամենադժվար մասերը Հայաստանի համար, քանի որ TIMSS-ի դեպքում դրանք կատարվել են միջազգային դերակատարների կողմից: Նա ակնկալում է, որ CBA-ի կիրառումը դժվար կլինի, քանի որ դա գնահատման մատուցման նոր եղանակ է Հայաստանում:<br>Նրան հասանելի են իր զբաղեցրած պաշտոնում իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներն ու սարքավորումները (օր.՝ համակարգիչ, ապահով ցանց, աշխատանքային տարածք): | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| I2 Գնահատման գործիքների համակարգող | Գնահատման գործիքների հետ կապված ազգային մակարդակի աշխատանքները (որոնց մեջ մտնում են՝ ազգային բովանդակության խմբագրում, թարգմանության, հարմարեցման և ստուգման կազմակերպում, շարադրված պատասխաններով հարցերի կոդավորում և զբաղմունքային տվյալների կոդավորում) վերահսկվում են համապատասխան հմուտ և փորձառու աշխատակցի կողմից: Անհրաժեշտության դեպքում կարող են ներգրավվել ոլորտային և համատեքստին բնորոշ փորձագետներ՝ աջակցելու համար ազգային կետերի խմբագրման, լեզվական և համատեքստին բնորոշ հարմարեցման, կոդավորողների վերահսկման և արդյունքների մեկնաբանման աշխատանքներին: | Կազմավորվող | Ամենայն հավանականությամբ NPM կլինի գնահատման գործիքների համակարգողը, քանի նա նպանատիպ փորձ ունի TIMSS-ի անցկացման մասով: Թեև TIMSS-ի անցկացման հետ կապված նրա փորձառությունը բարձր է գնահատվում, կան գնահատման նյութերի թարգմանության և հարմարեցման որոշ ընթացակարգեր, որոնց նա ծանոթ չէ: Դրանցից մեկն այն է, որ PISA-ի համար պահանջվում է կրկնակի անկախ թարգմանության գործընթաց, որին հաջորդում է այդ երկու առանձին թարգմանությունների համադրումը: Թարգմանությունը պետք է կատարվի թարգմանչական մասնագիտացված ծրագրով: Բացի դրանից, հարկավոր է հաշվի առնել, որ ավելի շատ քննական կետեր պետք է հարմարեցվեն և թարգմանվեն CBA-ի, քան PBA-ի համար, քանի որ CBA-ը կլինի հարմարվողական թեստ, որտեղ ներառված են ավելի շատ կետեր, քան PBA-ում:<br>PISA-ի տեխնիկական չափանիշներին համապատասխան կատարված թարգմանությունը, հարմարեցումը և ստուգումը կազմակերպելու կարողությունների զարգացումը կարող է շատ օգտակար լինել այս պաշտոնի համար: | PISA-ի տեխնիկական չափանիշներին համապատասխան թարգմանության, հարմարեցման և ստուգման աշխատանքները կազմակերպելու կարողություններ: |
| I3 Ընտրանքի որոշման ղեկավար | Ընտրանքի որոշման ղեկավարն ունի ընտրանքի մշակման և գիտական մեթոդների կիրառման համապատասխան հմտություններ և փորձ՝ վերահսկելու և կառավարելու համար ընտրանքի որոշման հետ կապված բոլոր գործողությունները ազգային մակարդակում: | Կազմավորվող | ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել: Քանի որ ընտրանքի որոշման ղեկավարի մասին տեղեկատվությունը հասանելի չէր CNA-ի անցկացման պահին, այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ հիմնվելով կազմակերպչական աշխատանքներում ցուցաբերված փորձառության վրա: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O9 Բնակչության թիրախային խումբ և հետազոտության ընտրանքի որոշում» գլխում: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| I4 Ուսումնասիրությունների և լոգիստիկայի ղեկավար | Ուսումնասիրությունների և լոգիստիկայի հետ կապված աշխատանքները (այդ թվում՝ դպրոցական նյութերի պատրաստումը, դպրոցի հետ կապը և համակարգումը, գնահատման լոգիստիկան, քննությունների անցկացումը և վերապատրաստումը, ազգային որակի մոնիթորինգը (այդ թվում՝ պատասխանների մոնիթորինգը՝ դպրոցական և աշակերտական մակարդակներում) կազմակերպվում և վերահսկվում են համապատասխան հմուտ և փորձառու աղխատակցի կողմից: Անվտանգության և գաղտնիության պահանջների, ինչպես նաև համակարգչային եղանակով գնահատում կատարելիս (եթե կիրառելի է) տեխնիկական միջոցների հետ վարվելու պահանջների մասին լավ տեղեկացված լինելը շատ կարևոր է: | (Պետք է նշանակվի)<br>Կազմավորված՝ PBA-ի դեպքում<br>Կազմավորվող՝ CBA-ի դեպքում | Այս պաշտոնը դեռևս զբաղեցված չէ: ATC-ում գոյություն ունի բաժին, որը մասնագիտացած է գնահատման լոգիստիկայի ոլորտում, և այս պաշտոնի համար, հավանաբար, կնշանակվի բաժնի աշխատակից:<br>Այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ ելնելով կազմակերպչական աշխատանքի փորձից: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O10 Հետազոտական գործողություններ և լոգիստիկա» գլխում: | |
| I5 Տվյալների ղեկավար | Տվյալների ղեկավարն ունի տվյալների կառավարման, տվյալների մշակման, քանակական տվյալների վերլուծության և վիճակագրական ծրագրերից (օրինակ՝ SPSS, SAS, STATA կամ R) օգտվելու համապատասխան հմտություններ և փորձառություն՝ ազգային մակարդակում տվյալների հետ կապված բոլոր գործողությունները վերահսկելու և կառավարելու համար: | Կազմավորված | Հավանական է, որ ATC-ի աշխատակիցը նշանակվի տվյալների ղեկավարի պաշտոնում: Նա Ինֆորմատիկայի և վերլուծական աշխատանքների վարչության պետն է: Նա ATC-ում աշխատում է 2005 թվականից, իսկ 2019 թվականից՝ վերոհիշյալ վարչության պետն է: Նա եղել է TIMSS-ի տվյալների ղեկավարը Հայաստանում; | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| | | | ,Նա ունի սովորողների տվյալների ստուգման, ինչպես նաև տվյալների մուտքագրման և տվյալների կառավարման սպասարկող անձնակազմի վերապատրաստման և վերահսկման փորձ: Նա նաև ունի ազգային մակարդակով հավաքված տվյալների վիճակագրական վերլուծության հաշվերվություններ ներկայացնելու փորձառություն, օրինակ՝ աշակերտների արդյունքների և համատեքստին բնորոշ տվյալների, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների տվյալների միջև կապի մասին վերլուծություն: Նա կարող է կատարել ազգային մակարդակով տվյալների վերլուծություն, կիրառել վիճակագրական ծրագրեր (օր.՝ SPSS, SAS, STATA կամ R), վերլուծել գնահատականները և արդյունքները, կատարել նկարագրական վերլուծություններ (օր.՝ կրկնվող սխալների, միջին գնահատականների համեմատությունների և շեղումների մասին), կատարել ռեգրեսիոն վերլուծություններ և հաշվարկել ստանդարտ սխալները՝ տեղեկատվություն տրամադրելով ընտրանքի՝ միջինի նկատմամբ տարածվածության կամ տատանողականության մասին:<br>Նա, ըստ անհրաժեշտության, պատրաստ կլինի ներկա գտնվել NPM հանդիպումներին և միջազգային դասընթացներին: Նրան հասանելի են իր զբաղեցրած պաշտոնում իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներն ու սարքավորումները (օր.՝ համակարգիչ, ապահով ցանց, աշխատանքային տարածք): | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| I6 Տվյալների վերլուծաբան | Կա տվյալների գլխավոր վերլուծաբան, ով ունի տվյալների քանակական վերլուծության և վիճակագրական ծրագրերի (օրինակ՝ SPSS, SAS, STATA կամ R) կիրառման համապատասխան հմտություններ և փորձառություն՝ ազգային մակարդակով տվյալների վերլուծության և հաշվետվությունների/զեկույցների պատրաստման հետ կապված հարցերով օգնելու համար: Տվյալների գլխավոր վերլուծաբանը ծանոթ է Պատասխանների տեսությանը և կարողանում է մեկնաբանել/վերլուծել վիճակագրական տվյալները: Նա ծանոթ է բարդ հետազոտական նախագծերում վիճակագրական ստանդարտ սխալների հաշվարկման մեթոդներին և կարող է օգտակար լինել գնահատման արդյունքների մեկնաբանման/վերլուծության հարցում: | Կազմավորվող | ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել:<br><br>Նա ունի աշակերտներից ստացված տվյալների ստուգման, ինչպես նաև տվյալների մուտքագրման և տվյալների կառավարման սպասարկող անձնակազմի վերապատրաստման և վերահսկման փորձ: Նա քննությունների և հարցաթերթիկների արդյունքների հիման վրա աշակերտների կատարողականի մասին ազգային մակարդակով զեկույցներ կազմելու փորձ ունի: Նա կարող է կատարել ազգային մակարդակով տվյալների վերլուծություն, կիրառել վիճակագրական ծրագրեր (օր.՝ SPSS, SAS, STATA կամ R), մեկնաբանել նիշեր և կատարողականության մակարդակներ, կատարել նկարագրական վերլուծություն (օր.՝ հաճախականություններ, միջին արժեքների համեմատություններ և շեղումներ), կատարել ռեգրեսիոն վերլուծություններ՝ կախված հետազոտության հարցերից, և հաշվարկել ստանդարտ սխալներ՝ տեղեկատվություն տրամադրելով ընտրանքի՝ միջինի նկատմամբ տարածվածության կամ տատանողականության մասին:<br><br>Այնուամենայնիվ, PISA-ն կլինի առաջին միջազգային լայնածավալ գնահատման ծրագիրը, որի շրջանակներում ազգային մակարդակի վերլուծությունները և զեկույցների կազմումը կիրականացվեն ոչ թե միջազգային դերակատարների, այլ PISA NC-ի կողմից: Հետևաբար, PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի տվյալները ազգային միջավայրում կիրառելու կարողությունների ստեղծման հնարավորությունները շատ օգտակար կլինեն:<br>Նա, ըստ անհրաժեշտության, պատրաստ կլինի ներկա գտնվել NPM-ի հանդիպումներին և միջազգային դասընթացներին: Նրան հասանելի են իր զբաղեցրած պաշտոնում իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներն ու սարքավորումները (օր.՝ համակարգիչ, ապահով ցանց, աշխատանքային տարածք): | PISA-ի տվյալները վերլուծելու և մեկնաբանելու, ինչպես նաև PISA-ի տվյալները ազգային միջավայրում օգտագործելու կարողություն: |
| I7 Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող | Անձնակազմն ունի PISA-ի ՏՏ-ի հետ կապված գործերով զբաղվող լրիվ դրույքով աշխատող ՏՏ ոլորտի համակարգող՝ երկրի/տնտեսական միավորի դպրոցներում համակարգչային եղանակով հետազոտություններ իրականացնելու համար (եթե այս տարբերակն ընդունված է): | Կազմավորված՝ PBA-ի դեպքում<br>Կազմավորվող՝ CBA-ի դեպքում | ATC-ն այդ պաշտոնում համապատասխան մասնագետ է նշանակել: Քանի որ Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգողի մասին տեղեկատվությունը հասանելի չէր CNA-ի անցկացման պահին, այս ցուցանիշի ընդգրկույթի կարողությունները գնահատվել են՝ հիմնվելով կազմակերպչական աշխատանքի փորձառության վրա: Տե՛ս «Հիմնավորում» և «Նշված կարողությունների կարիքները» բաժինները «O5 ՏՏ ենթակառուցվածք և աջակցություն» գլխում: | |

| Ցուցանիշի ընդգրկույթ | Կարողության ցուցանիշ | Վարկանիշ | Հիմնավորում | Կարողության բացահայտված կարիքներ |
|---|---|---|---|---|
| I8 Անգլերեն հաղորդակցություն | Ազգային կենտրոնը երաշխավորում է, որ ծրագրի բոլոր փուլերում հասանելի կլինի որակավորված անձնակազմ՝ ՏՀԶԿ-ի և միջազգային դերակատարների հարցումներին անգլերենով պատասխանելու համար: | Կազմավորված | ATC-ի հիմնական անձնակազմի մեծ մասը հիմնականում վարժ տիրապետում է անգլերենին: | |

# Հավելված Բ. Շահագրգիռ կողմերի և փաստաթղթերի քարտեզագրում

## Աղյուսակ Բ. Բ1. Շահառուների քարտեզագրման աղյուսակ

| Հարթություններ | Կառավարություն (պետական կամ տարածքային կառավարման) | Կրթական կամ գնահատման հաստատություններ, կազմակերպություններ, գործակալություններ | Կրթության զարգացման գործընկեր/դոնոր կազմակերպություններ |
|---|---|---|---|
| Հնարավորություններ ընձեռող միջավայր/Կազմակերպչական մակարդակ | **ՊԵՏԱԿԱՆ**<br>• Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>**ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ**<br>• Տիկին Ժաննա Անդրեասյան (նախարար)<br>• Պրն. Արթուր Մարտիրոսյան (նախարարի տեղակալ, միջազգային համագործակցության համակարգող)<br>• Պրն. Ռոբերտ Ստեփանյան (PISA-ի կառավարման խորհրդի Հայաստանի անդամ, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ)<br>**ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱԺԻՆՆԵՐ**<br>• Արտաքին կապերի և սփյուռքի վարչություն<br>• Արտաքին կապերի բաժին<br>• Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն<br>• Հանրակրթության վարչություն<br>• Հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժին | • Գնահատման և թեստավորման կենտրոն<br>• Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն<br>• Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (EMIS-ի պատասխանատու) | • ՅՈՒՆԻՍԵՖ<br>• Համաշխարհային բանկ<br>• «Գլոբալ գործընկերությունը կրթության ոլորտում»<br>• ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն<br>• Ասիական զարգացման բանկ<br>• Բրիտանական խորհուրդ<br>• Եվրոպական միություն |

| Հարթություններ | Կառավարություն<br>(պետական կամ տարածքային կառավարման) | Կրթական կամ գնահատման հաստատություններ, կազմակերպություններ, գործակալություններ | Կրթության զարգացման գործընկեր/դոնոր կազմակերպություններ |
|---|---|---|---|
| | **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ**<br>• Մարզպետարանների (տարածքային վարչական միավորներ) և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչություններ | | |
| Անհատական մակարդակ | | • PISA NPM<br>• PISA NC հիմնական դերակատարները հետևյալ ոլորտներում՝<br>○ գնահատման գործիքներ, ներառյալ՝ հարմարեցում/ թարգմանություն,<br>○ ընտրանքի որոշում,<br>○ ուսումնասիրություններ և լոգիստիկա,<br>○ տվյալների կառավարում,<br>○ տվյալների վերլուծություն և զեկուցում,<br>○ ՏՏ: | |

## Աղյուսակ Բ. Բ2. Փաստաթղթերի քարտեզագրման աղյուսակ

| Հարթություններ | Փաստաթղթեր |
|---|---|
| Հնարավորություններ ընձեռող միջավայր (Հայաստանում կրթության մասին տեղեկություն) | • ՀՀ կրթական համակարգի քարտեզագրում՝ համաձայն Կրթության միջազգային ստանդարտ դասակարգչի (ISCED-2011) - Տրամադրվել է Կրթության նախարարության կողմից<br>• ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2022 թվականի նոյեմբերիի 16-ի օրենքը (ոչ պաշտոնական թարգմանություն) - Տրամադրվել է Կրթության նախարարության կողմից<br>• ««Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը» հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի օրենքը (ոչ պաշտոնական թարգմանություն) – Տրամադրվել է Կրթության նախարարության կողմից:<br>• Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ. ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին - www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1&lang=eng<br>• «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ընդունվել է 2009 թվականի հուլիսի 10-ին - www.translation-centre.am/pdf/Translat/HH_orenk/Education/HO_160_N_General_Edu_en.pdf<br>• «Հայաստանի կրթական աղքատությունը» համառոտագիր (2019), Համաշխարհային Բանկ - https://thedocs.worldbank.org/en/doc/579611571223408189-0090022019/original/ECAECCSCARMLPBRIEF.pdf<br>• «Կրթության զարգացման պետական ծրագրի նախագիծը, որը քննարկվել է զարգացման գործընկերների հետ». 2022 թվականի փետրվարի 23-ի հոդված, Կրթության նախարարություն - https://escs.am/en/news/11672<br>• Կրթության նախարարության կայքէջ - https://escs.am/en<br>• «Համաշխարհային կրթության մոնիթորինգի զեկույց» - Հայաստան (NEPC, 2021) https://gem-report-2020.unesco.org/wp-content/uploads/2021/02/Armenia.pdf<br>• PISA-2025-ի CBIS երկիր կատարած այցելության ժամանակ տեղի ունեցած հանդիպումների արձանագրություններ. 2022 թվականի հուլիսի 11-15* |
| Կազմակերպչական մակարդակ (Հայաստանում գնահատման մասին տեղեկատվություն) | • TIMSS 2019 Հանրագիտարան. Հայաստան (2019), Արսեն Բաղդասարյան, Լուսինե Աթոյան, https://timssandpirls.bc.edu/timss2019/encyclopedia/armenia.html<br>• PISA-2025 CBIS-ի շրջանակներում պաշտոնյաների համար Կարողությունների կարիքների գնահատման հարցարանի պատասխանները (2022)<br>• SABER Երկրի զեկույց. Հայաստան - Աշակերտների գնահատում (2011) - Համաշխարհային բանկ, https://documents1.worldbank.org/curated/en/677381468218656159/pdf/799360WP0SABER0Box0379795B00PUBLIC0.pdf<br>• TIMSS 2019 Հանրագիտարան. Հայաստան (2019), Արսեն Բաղդասարյան, Լուսինե Աթոյան, https://timssandpirls.bc.edu/timss2019/encyclopedia/armenia.html<br>• Գնահատման և թեստավորման կենտրոնի կայքէջ - www.atc.am/<br>• ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան. ANLAS B6 խմբի եզրափակիչ սեմինար. 2022 թվականի հուլիսի 12-ին PowerPoint-ով ներկայացում - Տրամադրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից<br>• «Հայաստանը բարելավելու է կրթական համակարգը և ուսումնառության վերջնարդյունքները՝ Համաշխարհային բանկի օժանդակությամբ» 2022 թվականի մայիսի 20-ի հոդված, Համաշխարհային բանկ - www.worldbank.org/en/news/press-release/2022/05/20/armenia-to-improve-education-system-and-learning-outcomes-with-world-bank-support#:~:text=Armenia%20to%20Improve%20Education%20System%20and%20Learning%20Outcomes%2C%20with%20World%20Bank%20Support,-Share%20more&text=WASHINGTON%2C%20May%2020%2C%202022%20%E2%80%93,Project%20(EIP)%20in%20Armenia:<br>• «Կրթության փորձագետները վերլուծում են Հայաստանում ուսուցման գնահատման ազգային համակարգը», 2021 թվականի հուլիսի 7-ի հոդված, ՅՈՒՆԻՍԵՖ - www.unicef.org/armenia/en/stories/education-experts-analyze-national-learning-assessment-system-armenia<br>• PISA-2025-ի CBIS երկիր կատարած այցելության ժամանակ տեղի ունեցած հանդիպումների արձանագրություններ. 2022 թվականի հուլիսի 11-15*<br>• Կրթության նախարարության, ATC և CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի էլեկտրոնային նամակագրությունը 2022 թվականի հուլիսի 15-ին, օգոստոսի 12-ին, սեպտեմբերի 1-ին* |

| Հարթություններ | Փաստաթղթեր |
| --- | --- |
| Անհատական մակարդակ (ATC/ PISA NC-ի մասին տեղեկատվություն) | • PISA-2025 CBIS-ի շրջանակներում անհատների համար Կարողությունների կարիքների գնահատման հարցարանի պատասխաններ (2022)<br>• PISA-2025-ի CBIS երկիր կատարած այցելության ժամանակ տեղի ունեցած հանդիպումների արձանագրություններ. 2022 թվականի հուլիսի 11-15*<br>• Կրթության նախարարության, ATC և CBIS-ի փոխգործակցության պատասխանատուի էլեկտրոնային նամակագրությունը 2022 թվականի հուլիսի 15-ին, օգոստոսի 12-ին, սեպտեմբերի 1-ին* |

Նշումներ. * աստղանիշով նշված փաստաթղթերը ցույց են տալիս, որ դրանք մի քանի անգամ են հայտնվում աղյուսակում, քանի որ պարունակում են տեղեկություն, որը վերաբերում է մեկից ավելի նյութի:

# Հավելված Գ. CNA խորհրդատվություններ

## Աղյուսակ Գ. Գ.1. List of participants in the Capacity Needs Assessment consultations

| Անուն | Կոչում | Կազմակերպություն |
|---|---|---|
| Տիկին Ժաննա Անդրեասյան | Նախարար | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ Կրթության նախարարություն) |
| Պրն. Արթուր Մարտիրոսյան | Նախարարի տեղակալ, Միջազգային համագործակցության համակարգող | Կրթության նախարարություն |
| Պրն. Արկադի Պապոյան | Արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ | Կրթության նախարարություն |
| Պրն. Ռոբերտ Ստեփանյան | Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ<br>PISA-ի կառավարման խորհրդի Հայաստանի անդամ (ենթակա է հաստատման) | Կրթության նախարարություն |
| Տիկին Սուսաննա Ազատյան | Հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ (Հանրակրթության վարչություն) | Կրթության նախարարություն |
| Տիկին Վարդենի Ամիրխանյան | Արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ | Կրթության նախարարություն |
| Տիկին Թամարա Ալեքսանյան | Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ | Կրթության նախարարություն |
| Պրն. Արսեն Բաղդասարյան | Փոխտնօրեն<br>PISA NPM | Գնահատման և թեստավորման կենտրոն |
| Պրն. Արտաշես Թորոսյան | Տնօրենի պաշտոնակատար | Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն |
| Պրն. Արտակ Պողոսյան | Տնօրեն | Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն |
| Պրն. Դավիթ Ավագյան | Միջազգային օգնության/համագործակցության պատասխանատու | Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն |
| Տիկին Սիլվիա Մեստրոնի | Ներկայացուցչի տեղակալ | ՅՈՒՆԻՍԵՖ |
| Տիկին Ալվարդ Պողոսյան | Կրթական ծրագրերի ղեկավար | ՅՈՒՆԻՍԵՖ |
| Պրն. Ալեքսանդր Պլատո Հակոբյան | Արտաքին կապերի կառավարման գծով ղեկավար | «Դասավանդի՛ր, Հայաստան» |

# Հավելված Դ. CNA հարցաթերթեր

## Հարցաշար պաշտոնյաների համար

### *Մասնակցի տվյալներ*

Մուտքագրեք ձեր տվյալները:

| | |
|---|---|
| Անուն | |
| Աշխատանքային պաշտոն | |
| Կազմակերպություն | |
| Պաշտոնը PISA-2025 ստուգատեսում | |

### *Ներածություն*

